ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիսի 2025 թվականի N 348 -Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 260-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի 2025 թվականի մայիսի 22 -ի N 932-95/15 գրությունը.

Որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման մարզային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման մարզային պլանը հաստատելու մասին» N 260-Ա որոշումը:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2025 թվականի
հոկտեմբեր ի 11 -ի N: 348 -Ա որոշման

ՄԱՐԶԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Տարահանումն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է վտանգավոր տարածքից անվտանգ տարածք բնակչության կամ բնակչության մի մասի, ինչպես նաև նյութական և մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխման ու տեղաբաշխման միջոցով:

2. Տարահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ ՀՀ) վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ կողմից պատերազմ հայտարարվելու, ինչպես նաև այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքում (բնակավայրերում, կազմակերպություններում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:

3. Տարահանումը կարող է իրականացվել 2 փուլով: Առաջին փուլում բնակչության տարահանում՝ աղետի գոտուց անվտանգ տարածք՝ ժամանակավոր տեղակայման կետեր: Ժամանակավոր տեղակայման կետերի համար կարող են օգտագործվել կինոթատրոնները, ակումբները, ուսումնական հաստատությունները, հյուրանոցները, հանրակացարանները, վրանային ավանները և այլն: Երկրորդ փուլում տևական բնույթի արտակարգ իրավիճակների կամ մշտական բնակության վայր վերադառնալու անհնարինության դեպքում բնակչությանը ժամանակավոր տեղակայման կետերից տեղափոխում են երկարատև բնակության կետեր, որտեղ հնարավոր է բնակության երկարատև և համակողմանի կենսագործունեության ապահովումը: Երկարատև բնակության կետերի համար կարող են օգտագործվել

առողջարանները, նախաբուժարանները, հանգստյան տները, պանսիոնատները, տուրիստական բազաները, հյուրանոցները և այլ շինություններ, որոնք համապատասխանում են երկարատև բնակության պայմաններին: Ժամանակավոր տեղակայման կետերը և երկարատև բնակության կետերն ընտրվում են նախօրոք՝ ելնելով արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ առաջացող հնարավոր իրավիճակներից:

4. Տարահանման պլանավորումը և կազմակերպումը, տարահանված բնակչության տեղաբաշխումն ու բազմակողմանի կենսաապահովումը և արտակարգ իրավիճակների վերացումից հետո վերջիններիս վերադարձը մշտական բնակության վայրեր իրականացնում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները՝ տարահանման հանձնաժողովների միջոցով:

5. Բնակչության տարահանումը նախատեսվում է՝

1) հեղեղավտանգ, սելավավտանգ, սողանքավտանգ և ձնահյուսավտանգ տարածքներից,

2) ուժեղ երկրաշարժի հետևանքով ավերված, բնակվելու համար վտանգավոր և ոչ պիտանի տարածքներից,

3) Հայկական ատոմային էլեկտրակայանի (այսուհետ՝ ՀԱԷԿ) ընդհանուր վթարի կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում տարահանման՝ սահմանված միջամտման չափաքանակների գերազանցմամբ ճառագայթային ազդեցության և (կամ) ճառագայթային աղտոտման ենթակա տարածքներից,

4) ճառագայթային, քիմիական և կենսաբանական նյութեր օգտագործող, պահպանող կամ արտադրող կազմակերպություններում հնարավոր վթարի կամ վթարի հետևանքով առաջացած վարակավտանգ գոտուց, ինչպես նաև այդ նյութերի տրանսպորտային փոխադրումների ժամանակ տեղի ունեցած վթարի հետևանքով առաջացած վտանգավոր տարածքից,

5) սահմանամերձ բնակավայրերից և տարածքներից մասնակի տարահանում կարող է իրականացվել ռազմական դրության ժամանակ հակառակորդի հանկարծակի հարձակման կամ դրա անմիջական սպառնալիքի, ինչպես նաև մարտական գործողությունների վարման և զենքի տեսակների անմիջական կիրառման կամ դրա սպառնալիքի դեպքում,

6) շենքերում, շինություններում, մարդկանց կուտակման վայրերում հրդեհների կամ պայթուցիկ սարքի տեղադրման մասին ահազանգի ստացման կամ հայտնաբերման դեպքում:

6. Տարահանման ենթակա են՝

1) կազմակերպությունների անձնակազմը՝ ընտանիքի չաշխատող անդամների հետ, որոնք, ըստ զորահավաքային առաջադրանքի, ռազմական դրության ժամանակ անվտանգ տարածքում շարունակում են իրենց գործունեությունը,

2) նյութական և մշակութային արժեքները,

3) անաշխատունակ ու արտադրության և այլ ոլորտներում չընդգրկված բնակչությունը:

7. Տարահանվողներն իրենց հետ վերցնում են փաստաթղթեր, անձնական իրեր, այլ անհրաժեշտ պարագաներ և որոշակի քանակությամբ սննդամթերք: Բուժման մեջ գտնվող հիվանդները տարահանվում են բժշկական հաստատությունների հետ միասին:

8. Տարահանման ենթակա են մշակութային արժեքների հետևյալ խմբերը՝

1) առաջնահերթ տարահանման ենթակա թանգարանային առարկաները և գրադարանային հավաքածուները,

2) ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկված գրավոր հուշարձանները, փաստաթղթի պարտադիր օրինակը և փորձաքննությամբ արժևորված փաստաթղթերը,

3) անհրաժեշտության դեպքում՝ այլ մշակութային արժեքներ:

9. Տարահանման ենթակա մշակութային արժեքների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը:

10. Տարահանման ենթակա նյութական արժեքները բաժանվում են հետևյալ խմբերի՝

1) պետական արժեքներ՝ ոսկու արժութային պաշարները, բանկային ակտիվները, արժեթղթերը, չափանմուշները, թանկարժեք մետաղների ու քարերի պաշարները և արխիվները,

2) արտադրական և գիտական արժեքներ՝ հազվագյուտ ու արժեքավոր գիտական և արտադրական սարքավորումները, տեխնիկական փաստաթղթերի ապահովագրական ֆոնդը, արժեքավոր գիտական փաստաթղթերը, էլեկտրոնային կրիչներով տվյալների շտեմարանը, կազմակերպությունների բացառիկ գիտական ժողովածուներն ու ֆոնդերը,

3) պարենային պաշարներ, ջրամատակարարման կազմակերպությունների սարքավորումներ, առողջապահական կազմակերպությունների բժշկական սարքավորումներ, բժշկական գույքի պաշարներ և նյութական միջոցների պաշարներ, որոնք անհրաժեշտ են բնակչության առաջնահերթ կենսաապահովման համար,

4) գյուղատնտեսական կենդանիներ, հացահատիկային մշակաբույսերի, սերմի և կերի պաշարներ,

5) նյութական միջոցների պաշարներ՝ վթարափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման ապահովման համար:

11. Տարահանման ենթակա նյութական արժեքների խմբերի որոշման համար հիմք է դրանց գնահատումը, որն իրականացվում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների համապատասխան մասնագետների կողմից, իսկ անհետաձգելի գործողություններ պահանջող առանձին դեպքերում հիմք է այդ մարմինների ու կազմակերպությունների ղեկավարների որոշումը:

12. Համապատասխան քաղաքացիական պաշտպանության պետերը հաստատում են քաղաքացիական պաշտպանության խմբին դասվող տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանները՝ համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ:

13. Բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանավորման, անցկացման, ապահովման ու անվտանգ տարածքում դրանց տեղաբաշխման, ինչպես նաև տարահանված բնակչության կենսագործունեության, նյութական և մշակութային արժեքների պահպանման կազմակերպման համար պատասխանատվություն են կրում համապատասխան քաղաքացիական պաշտպանության պետերը:

ԳԼՈՒԽ 2
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

14. Շիրակի մարզը (այսուհետ՝ Մարզ) զբաղեցնում է ՀՀ տարածքի հյուսիս-արևմտյան մասը: Մարզի ձգվածությունը հյուսիսից հարավ կազմում է մոտ 75 կիլոմետր, իսկ Նորշեն-Սառնաղբյուր բնակավայրերը միացնող գծից մինչև Արագած լեռնագագաթը՝ մոտ 55 կիլոմետր: Մարզի տարածքը կազմում է 2,681 քառակուսի կիլոմետր, մարզկենտրոնը Գյումրի քաղաքն է, որի մակերեսը կազմում է 44,44 քառակուսի կիլոմետր: Մարզի աշխարհագրական դիրքը երկրի ներսում ծայրամասային է, արևմուտքում սահմանակից է Թուրքիայի Հանրապետության հետ (117 կիլոմետր), հյուսիսում՝ Վրաստանի Հանրապետության հետ (66 կիլոմետր), իսկ արևելքից և հարավից ՀՀ համապատասխանաբար Լոռու և Արագածոտնի մարզերի հետ: 2025թվականի հունիսի 1-ի դրությամբ մարզն ունի **6** համայնք՝ **130** բնակավայրերով: Միավորված համայնքներն են՝ Ախուրյանը, Արթիկը, Անին, Ամասիան և Աշոցքը: Մարզի բնակչությունը 2025 թվականի հունիսի 1-ի դրությամբ կազմում է **299466** մարդ, որից քաղաքներում բնակվում է **184631** մարդ, իսկ գյուղերում՝ **114835** մարդ: Մարզի բնակչության միջին խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա կազմում է 111 մարդ: Մարզի

բնակչության գրեթե 61,7 %-ը բնակվում է քաղաքներում: Մարզկենտրոն՝ Գյումրի քաղաքում բնակվում է **157300** մարդ: Արթիկ համայնքի բնակավայրերի թիվը **24 է,** բնակչությունը՝ **52905** մարդ, Ախուրյան համայնքի բնակավայրերի թիվը՝ **35**, բնակչությունը՝ **45865** մարդ, Անի համայնքի բնակավայրերի թիվը՝ **19,** բնակչությունը՝ **23168** մարդ, Աշոցք համայնքի բնակավայրերի թիվը՝ **25**, բնակչությունը՝ **12079** մարդ**,** Ամասիա համայնքի բնակավայրերի թիվը՝ **26,** բնակչությունը՝ **8149** մարդ:

ԳԼՈՒԽ 3
ՄԱՐԶԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՏԱՐԱՀԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

15. Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օրվա հերթափոխի հերթապահը (այսուհետ ՕՀՀ), ստանալով արտակարգ իրավիճակի մասին հաղորդագրությունը, այն փոխանցում է ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն (այսուհետ՝ ՃԿԱԿ) և ՀՀ Շիրակի մարզպետին:

16. Միաժամանակ, ՃԿԿ ՕՀՀ-ն իրականացնում է մարզի ղեկավար կազմի, մարզի համայնքների ղեկավարների և տարահանման մարզային հանձնաժողովի անդամների ազդարարումը: Ազդարարման համակարգի խափանման դեպքում մարզի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է սուրհանդակների, իսկ տուժած բնակչության իրազեկումը և վարվելակերպի մասին կանոնները՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի ստորաբաժանումների շարժական ուժերով ու միջոցներով:

ԳԼՈՒԽ 4
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

17. Արտակարգ իրավիճակների դեպքում տարահանման մասին որոշում ընդունում են՝

1) անդրսահմանային և հանրապետական մասշտաբների արտակարգ իրավիճակների դեպքում՝ ՀՀ կառավարությունը,

2) մարզային մասշտաբի արտակարգ իրավիճակի դեպքում՝ մարզպետը,

3) համայնքային մասշտաբի արտակարգ իրավիճակի դեպքում՝ համայնքի ղեկավարը,

4) տեղական մասշտաբի արտակարգ իրավիճակի դեպքում՝ կազմակերպության ղեկավարը:

18. Տարահանման մասին որոշում ընդունող պաշտոնատար անձը պարտավոր է ընդունված որոշման մասին անմիջապես տեղեկացնել լիազոր մարմնի ՃԿԿ:

19. Արտակարգ իրավիճակների կանխման և դրանց հնարավոր հետևանքների վերացմանն ուղղված աշխատանքների ղեկավարն իրավունք ունի ինքնուրույն որոշում ընդունելու՝ վտանգավոր տարածքից բնակչությանն անվտանգ վայր տեղափոխելու վերաբերյալ:

20. Բնակչության տարահանման պլանավորումը և կազմակերպումը, տարահանված բնակչության տեղաբաշխումն ու բազմակողմանի կենսաապահովումն և արտակարգ իրավիճակների վերացումից հետո նրանց վերադարձը մշտական բնակության վայրերն իրականացնում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները՝ տարահանման հանձնաժողովների միջոցով:

21. Բնակչությունն անվտանգ տարածք տարահանվում է համակցված եղանակով՝ բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներով՝ անկախ դրանց սեփականության ձևից և գերատեսչական պատկանելությունից, որոնք, ըստ զորահավաքային պլանի, զինվորական և այլ հատուկ կարևոր փոխադրումներում ներգրավված չեն, միաժամանակ ապահովելով բնակչության մնացած մասի հետիոտն կարգով դուրսբերումը: Այդ դեպքում նախատեսվում է տրանսպորտի բոլոր հնարավորությունների առավելագույն օգտագործում՝ ներառյալ սեփական օգտագործման տրանսպորտային միջոցները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համարժեք փոխհատուցմամբ:

22. Առաջին հերթին տրանսպորտով դուրս են բերվում հղի կանայք, հիվանդները, փոքրահասակ երեխաներ (մինչև 14 տարեկան) ունեցող կանայք, երեխաները և տարեցները, բժշկական հաստատությունները, ռազմական դրության ժամանակ իրենց գործունեությունը շարունակող կազմակերպությունների հանգստացող հերթափոխների աշխատողները, բնակչության այն մասը, որը չի կարող տեղաշարժվել հետիոտն կարգով: Պլանավորվում է տրանսպորտային միջոցների անբավարարության դեպքում՝ մնացած բնակչությանը դուրս բերել հետիոտն կարգով:

23.Ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպանության խմբին դասվող տարածքում իրենց գործունեությունը շարունակող կազմակերպությունների աշխատող հերթափոխերը տարահանման միջոցառումների սկսման պահից մնում են իրենց

աշխատավայրերում՝ անհրաժեշտության դեպքում պատսպարվելով քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներում:

24.Նյութական ու մշակութային արժեքներն անվտանգ տարածք են փոխադրվում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների տրանսպորտային միջոցներով, որոնց տնօրինության ներքո են գտնվում տվյալ նյութական ու մշակութային արժեքները: Անհրաժեշտ տրանսպորտային միջոցների անբավարարության դեպքում թույլատրվում է այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց տրանսպորտային միջոցների ներգրավումը (հետագա համարժեք փոխհատուցմամբ), որոնք, ըստ զորահավաքային պլանի, չեն մասնակցում զինվորական և այլ հատուկ կարևոր փոխադրումների իրականացմանը, ինչպես նաև բնակչության տարահանմանը:

25.Նյութական և մշակութային արժեքների տարահանման նպատակով կազմավորվում են հատուկ շարասյուներ, որոնց ուղեկցում են ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի համապատասխան ստորաբաժանումների աշխատողները և տարահանման երթուղիներում այդ արժեքների պահպանության համար պատասխանատու անձինք:

26. Տարահանման համար տրամադրվող տրանսպորտային միջոցները հատկացվում և դրանք վառելիքաքսուքային նյութերով ապահովվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

27.Պատերազմական գործողությունների ժամանակ զենքի տեսակների կիրառման կամ դրա սպառնալիքի դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է ՀՀ կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի զինվորական կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

28. Կազմակերպությունում նյութական և մշակութային արժեքների տարահանման վերաբերյալ որոշում ընդունում է տվյալ կազմակերպության ղեկավարը՝ համաձայն պետական կառավարման մարմինների կողմից սահմանված ցանկի, իսկ ոչ պետական կազմակերպությունների նյութական և մշակութային արժեքները՝ համապատասխան արժեքները կառավարող մարմինները:

ԳԼՈՒԽ 5
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

29.Տարահանման միջոցառումների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՀ Շիրակի մարզպետի 2024 թվականի հուլիսի 10-ի № 273-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ Շիրակի մարզային տարահանման հանձնաժողովը, որը կազմակերպում և ղեկավարում է մարզի բնակչության ու կազմակերպությունների տարահանման միջոցառումները: Տարահանվող բնակչության ընդունման և հաշվառման միջոցառումների լիարժեք իրականացման նպատակով ստեղծված են տարահանման հավաքակայաններ, որոնք հանդիսանում են նաև ընդունման հավաքակայաններ, որտեղ կատարվում է տարահանված բնակչության ընդունումը, հաշվառումը և բաշխումը՝ ըստ ժամանակավոր տեղակայման կետերի:

ԳԼՈՒԽ 6
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ

30. երկրաշարժի հետևանքով Մարզում կստեղծվի հետևյալ ինժեներական իրավիճակը՝ վնասված բնակարաններ՝ 8019, որոնցից, 3-րդ կարգ՝ 2726, 4-րդ կարգ՝ 1092, 5-րդ կարգ՝ 4250, (ք.Գյումրիում վնասված բնակարաններ՝ 4250, որոնցից, 3-րդ կարգ՝ 1162, 4-րդ կարգ՝ 444, 5-րդ կարգ՝ 1810), հրդեհների օջախների քանակը կկազմի 31, որից 13-ը Գյումրիում: մարզում փլուզումներով խցանված ճանապարհների երկարությունը կկազմի 55 կմ, որից 24 կմ Գյումրիում: Փլուզումների ընդհանուր ծավալը՝ 10531345մ^3, որից 4485384 մ^3 Գյումրիում: Կոմունալ էներգետիկ ցանցի վթարների թիվը՝ 297, որից 127 տեղամաս Գյումրիում: Բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն 4491 մարդ, սանիտարական՝ 2887 մարդ: Անվերադարձ կորուստները մարզում կկազմեն 1604 մարդ, Գյումրի քաղաքում բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն՝ 1913, որից անվերադարձ՝ 683, սանիտարական՝ 1229, ծանր վիրավոր՝ 615, միջին ծանրության վիրավորներ՝ 332, թեթև վիրավորներ՝ 283: Անօթևան մնացած բնակչությունը կացարաններով ապահովվում է հետևյալ ձևերով՝

1) ապակենտրոնացված տեղաբաշխում,
2) տեղավորում ճամբարներում,
3) կոլեկտիվ տեղավորում:

31. Ապակենտրոնացված տեղաբաշխման դեպքում անօթևան բնակչությանը տեղավորում են բնակվելու համար պիտանի տներում:

32. անօթևան մնացած 12978 բնակչության 70%-ը՝ 9085 մարդ (երեխաներ, հղի կանայք, ծերեր, հաշվանդամներ) տարահանվում են քաղաք Երևան: Որպես տարահանման միջանկյալ հավաքակայան համարվում է Գյումրու Վարդանանց հրապարակը՝ ներառյալ դիմացի պուրակը: Տարահանման երթուղին է՝ Գյումրի-Բագրավան-Արագած ավան-Քարակերտ-Արմավիր-Էջմիածին-Երևան, անհրաժեշտ տրանսպորտային միջոցների թիվը՝ 303 ավտոբուս.

33. Գյումրի քաղաքի անօթևան մնացած 3893 բնակիչների համար նախատեսվում է մեկ վրանային ճամբար՝ Մարզի Ախուրյան համայնքի Հովունի բնակավայրի տարածքի հողատարածքներում, որոնց բնութագրերը և առանձնահատկություններն ուսումնասիրված ենԵրկրաշարժի դեպքում: Գյումրի քաղաքից տարահանման ենթակա բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ տարիքային բաշխվածության, ներկայացված են Աղյուսակ № 1-ում:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻՑ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/հ	Մարզի բնակավայրի անվանումը	Տարահանվող բնակչության թվաքանակը	Բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի				
			մինև 2 տարեկան	2-7 տարեկան	7-17 տարեկան	17 տարեկանից բարձր	
						կին	տղամարդ
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**
1.	ք.Գյումրի	12978	311	856	1155	5814	4842

ԳԼՈՒԽ 7
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԱՂԵՏԱԼԻ ՋՐԱԾԱԾԿՄԱՆ ՎՏԱՆԳԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

35. Մարզի վտանգավոր հիդրոտեխնիկական կառույցները 7-ն են՝ Արփի լիճ, Կառնուտի, Վարդաքարի, Մանթաշի, Սառնաղբյուրի, Թավշուտի և Ախուրյանի ջրամբարներ: Հնարավոր հեղեղումների ժամանակահատվածը հիմնականում ապրիլ–հուլիս ամիսներն են, երբ ջրամբարներում ջրի մակարդակը հասնում է առավելագույնի. մնացած ամիսներին ջրամբարները վտանգ չեն ներկայացնում: Ախուրյանի ջրամբարը գտնվում է Ախուրյան գետի ստորին հոսքում, հայ-թուրքական սահմանում: Երկարությունը 20 կիլոմետր է (սահմանի երկայնքով), ջրի ծավալը գնահատվում է 525 մլն/մ^3: Օգտագործվում է գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համար երկու սահմանների կողմերում: Ջրամբարի պատվարի հնարավոր փլուզման դեպքում Մարզի բնակավայրերը չեն հայտնվում ջրածածկման գոտում: Բնակչության տարահանումը աղետալի ջրածածկման գոտուց իրականացվում է մարզում առկա թվով 6 հիդրոտեխնիկական կառույցների փլուզման սպառնալիքի կամ փլուզման դեպքում: Կառույցի փլուզման կանխատեսման դեպքում տարահանումն իրականացվում է վաղօրոք, որը կրում է տեղային բնույթ: Սուղ ժամկետների պայմաններում տարահանումն իրականացվում է տարածքային սկզբունքով: Տարահանվող բնակչությունը դուրս է բերվում միջանկյալ տարահանման կետ՝ աղետալի ջրածածկման գոտու սահման և այնտեղից տեղափոխվում է ժամանակավոր տեղաբաշխման վայրեր:

36.Հիդրոտեխնիկական կառույցի փլուզման ստույգ վտանգի առկայության դեպքում իրականացվում է հրատապ տարահանում փլուզման գոտուց: Փլուզման գոտու սահմաններից դուրս տարահանումն իրականացվում է ելնելով կանխատեսված կամ ռեալ ստեղծված հիդրոլոգիական իրավիճակից: Բնակչության տարահանումը կարող է իրականացվել առանց տարահանման հավաքակայանների ծավալման: Այդ դեպքում տարահանման հավաքակայանների անձնակազմերից կազմված օպերատիվ խմբերը կազմակերպում են բնակչության դուրս բերումը վտանգավոր գոտու սահմաններից՝ հետագայում մարդկանց տեղափոխելու համար ժամանակավոր տեղաբաշխման վայրեր:

37. Մարզի թվով 6 ջրամբարների ջրածածկման գոտու բնակչության տարահանման վերաբերյալ տեղեկությունները (ժամանակացույցը) ներկայացված են Աղյուսակ №2-ում:

Աղյուսակ №2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԹՎՈՎ 6 ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ՋՐԱԾԱԾԿՄԱՆ
ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Տարահանվող համայնքները, բնակավայրերը և բնակչության թիվը	Տարահանման ենթակա բնակչության թիվը	Տարահանման սկիզբը և ձևը ժ+		երթուղին	Ընդունող բնակավայրը և բնակչության թիվը	Համայնքների միջև եղած հեռավորությունը (կիլոմետր)	Բնակչության միջանկյալ կուտակման վայրը	Բնակչության ժամանման ժամանակը	Համայնքի հեռավորությունը ջրամբարից (կիլոմետր)	Էլեկտրական շչակների քանակը, տիպը, տեխնիկական վիճակը, տեղադրման վայրերը
			հետիոտն	տրանսպորտա յին միջներով							
Արփի լճի ջրամբար											
1	Ամասիա համայնքի Բերդաշեն-Պաղակն բնակավայրեր 371	203	ժ+անհապաղ 23 մարդ	մարդատար18 ավտոբուս 1, բեռնատար 2, 180 մարդ	1	Ամասիա համայնքի Զարիշատ բնակավայր 98	6	մոտակա բարձունք «Կապուտ-կոխ» 2208,8 մ	ժ+1 ժամ	3,4	**<u>1 հատ՝ U-40</u>** <u>սարքին</u> գ.Բերդաշեն վարչական շենք, փող.1, շենք 32
2	Ամասիա համայնքի Ալվար-Արավետ բնակավայրեր 300	138	ժ+անհապաղ 68 մարդ	մարդատար 14 70 մարդ	2	Ամասիա համայնքի Ամասիա բնակավայր 1954	16	մոտակա բարձունք «Կիզիլեռ» 2166,6 մ	ժ+1ժ 15ր	8,0	**<u>1 հատ՝ U-40</u>** <u>սարքին</u> գ.Ալվար վարչական շենք, փող.4, 25շ.

3	Աշոցք համայնքի Փոքր Սեպասար բնակավայր 271	198	ժ+անհապաղ 108 մարդ	մարդատար 6 ավտոբուս 1, բեռնատար 1, 90 մարդ	3	Ամասիա համայնքի Ամասիա բնակավայր 1954	13	մոտակա բարձունք 2083մ	ժ+1ժ 20ր	13,0	առկա չէ
4	Աշոցք համայնքի Մեծ Սեպասար բնակավայր 920	920	ժ+10ր 623 մարդ	մարդատար 32 միկրոավտո-բուս 1, բեռնատար 4, 310 մարդ	4	Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայր 719	5,5	Աշոցք-Ղազանչի ավտոմայրուղու 3-րդ կմ	ժ+3ժամ	14,4	առկա չէ -
5	Ախուրյան համայնքի Առափի բնակավայր 1720	830	ժ+1ժ 520 մարդ	մարդատար 17 ավտոբուս 1, միկրոավտո-բուս 1 բեռնատար 6, 310 մարդ	5	Ախուրյան համայնքի Ոսկեհասկ բնակավայր 1966	4,5	մոտակա բարձրունք (գյուղի արևմտյան հատված)	ժ+2,5 ժամ	42	<u>5 հատ, որից՝</u> <u>1 հատ՝ **U-40** սարքին,</u> <u>**4 հատ՝** U-40E սարքին</u> գ.Առափի, վարչական շենք՝ **U-40,** U-40E, Առափիի միջնակարգ դպրոց՝ U-40E, քարաշեն ավտոտնակի վրա, 3-րդ փ. 66շ.՝ U-40E պանրի գործարան «Harmony Farm» U-40E
6	Ախուրյան համայնքի Գետք բնակավայր 613	526	ժ+1ժ 10ր 46 մարդ	Մարդատար 32, բեռնատար 14, 480 մարդ	6	Ախուրյան համայնքի Ազատան բնակավայր 5419	4	մոտակա բարձունք	ժ+2 ժամ	46	<u>3 հատ, որից՝</u> <u>1 հատ՝**U-40** սարքին,</u> <u>**2 հատ՝**U-40E սարքին</u> գ.Գետք, վարչական շենք՝ **U-40,** U-40E, Գետքի միջնակարգ դպրոց՝ U-40E

7	Ախուրյան համայնքի Երազգավորս բնակավայր 1579	435	ժ+1ժ 20ր -	Մարդատար 51, բեռնատար 6, 435 մարդ	7	Անի համայնքի Գուսանա գյուղ բնակավայր 917	6	բարձրադիր գոտի	ժ+2ժ	51	2 հատ, որից՝ 1 հատ՝**U-40** սարքին, **1 հատ՝**U-40E սարքին գ.Երազգավորս, վարչական շենք՝ U-40E, Երազգավորսի միջնակարգ դպրոց՝ U-40
Մասնակի ջրաածկվում են											
8	Գյումրու արևմտյան ցածրադիր հատված 158225	200	ժ+1ժ	ավտոբուս 7 200	8	Գյումրի համայնք 158225	1	բարձրադիր գոտի	ժ+30ր	41	1 հատ U-40 սարքին Շիրակ օդանավավակայան
9	Ախուրյան համայնքի Ղարիբջանյան բնակավայր 1005	321	ժ+1ժ 10ր 81 մարդ	մարդատար 24 ավտբուս 2 բեռնատար 2 240 մարդ	9	Ախուրյան համայնքի Ազատան բնակավայր 5419	3	բարձրադիր գոտի	ժ+1 ժամ	44	3 հատ՝ U-40E սարքին գ.Ղարիբջանյան, վարչական շենք՝ U-40E, Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց՝ U-40E նախկին «Ախուրյան-կայարան»կայարանամերձ տարածք, 11փողոց. 4/4 տուն՝ U-40E
10	Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայր 1120	300	ժ+1ժ 5ր	մարդատար 30 ավտոբուս 1, բեռնատար 6 300մարդ	10	Ախուրյան համայնքի Ոսկեհասկ բնակավայր 1966	2,5	բարձրադիր գոտի	ժ +50ր	46	4 հատ, որից՝ 2 հատ՝ MS-190 սարքին, **2 հատ՝**U-40E սարքին, գ.Ախուրիկ, վարչական

											շենք՝ 2 հատ-MS-190, U-40E, ՝ Ախուրիկի միջնակարգ դպրոց՝ U-40E,
11	Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայր 745	174	ժ+1ժ 10ր ------	մարդատար 57 բեռնատար 1 174 մարդ	11	Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայր 917	4	բարձրադիր գոտի	ժ+1ժ 30ր	52	**<u>1 հատ՝ U-40</u>**<u>E սարքին</u> գ.Բայանդուր, Վարչական շենք, 8-րդ փ. 7շ.
Ընդամենը տարահանվող		**4245**									
Կառնուտի ջրամբար											
1	Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայր 9358	890	ժ+անհապաղ -----	մարդատար 897 միկրոավտո-բուս 5 բեռնատար 20 890 մարդ	1	Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայր 9358	**2**	բարձրադիր գոտի	ժ+անհապաղ	3,6	**<u>2 հատ՝ U-40</u>** <u>սարքին</u> գ.Ախուրյան, վարչական շենք՝ U-40, Ախուրյանի մշակույթի տուն՝ U-40
2	Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայր 1814	360	ժ+անհապաղ -----	մարդատար 83 ավտոբուս 1 միկրոավտոբուս 4 բեռնատար 30 360 մարդ	2	Գյումրու Նորավան թաղամաս 158225	5	բարձրադիր գոտի	ժ+1ժ50ր.	4,0	**<u>1 հատ՝ U-40</u>** <u>սարքին</u> Արևիկի միջնակարգ դպրոց, 1-ին փ.4շ
3	Ախուրյան համայնքի Ազատան բնակավայր 5419	1892	ժ+անհապաղ -----	մարդատար 750 ավտոբուս 3 միկրոավտոբուս 2 բեռնատար 20 1892 մարդ	3	Ախուրյան համայնքի Ազատան բնակավայր 5419	0,5-1	բարձրադիր գոտի	ժ+20ր	10,0	**<u>2 հատ՝ U-40</u>** <u>սարքին</u> գ.Ազատան, վարչական շենք՝ U-40 (միաֆազ), Ազատանի մշակույթի տուն՝ U-40 (եռաֆազ)

4	Ախուրյան համայնքի Ղարիբջանյան բնակավայր 1005	600	ժ+անհապաղ 360 մարդ	մարդատար 24 ավտոբուս 2 բեռնատար 2 240 մարդ	4	Գյումրի 158225	2	բարձրադիր գոտի	ժ+40ր	11,0	<u>3հատ՝ U-40E սարքին</u> գ.Ղարիբջանյան, վարչական շենք՝ U-40E, Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց՝ U-40E նախկին «Ախուրյան-կայարան»կայարանամերձ տարածք, 11փողոց. 4/4 տուն U-40E
5	Ախուրյան համայնքի Գետք բնակավայր 613	450	ժ+անհապաղ -----	մարդատար 32 բեռնատար 14 450 մարդ	5	Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայր 745	4	բարձրադիր գոտի	ժ+1ժ20ր	13,0	<u>3 հատ, որից՝</u> <u>1 հատ՝**U-40** սարքին,</u> <u>**2 հատ՝**U-40E սարքին</u> գ.Գետք, վարչական շենք՝ **U-40,** U-40E, Գետքի միջնակարգ դպրոց՝ U-40E
Ընդամենը տարահանվող		**4192**									
Մանթաշի ջրամբար											
1	Արթիկ համայնքի Մեծ Մանթաշ բնակավայր 2265	2046	ժ+անհապաղ 1341 մարդ	Մարդատար 60, միկրոավտոբուս 3, ավտոբուս 3, բեռնատար 9, 705 մարդ	1	<< Արագածոտնի մարզի Գեղադիր բնակավայր 654	5,2	բարձրադիր գոտի	ժ+1ժամ	10	<u>**1 հատ՝ U-40** սարքին</u> գ. Մեծ Մանթաշ վարչական շենք, խճ.2, տուն 1

2	Արթիկ համայնքի Փոքր Մանթաշ բնակավայր 2286	1600	ժ+անհապաղ 695 մարդ	մարդատար 139 ավտոբուս 1 բեռնատար 6 905 մարդ	2	Արթիկ համայնքի Սարալանջ բնակավայր 1138	2,8	բարձրադիր գոտի	ժ+1ժ 15ր	8	**<u>1 հատ՝ U-40</u>** <u>սարքին</u> գ. Փոքր Մանթաշ վարչական շենք, 7փ. 8շ.
3	Արթիկ համայնքի Արևշատ բնակավայր 1899	300	ժ+անհապաղ 300 մարդ	------	3	Արթիկ համայնքի Արևշատ բնակավայր բարձրադիր գոտի, 1899	0,2-0,4	բարձրադիր գոտի	ժ+10ր	12	**<u>1 հատ՝ U-40</u>** <u>սարքին</u> գ. Արևշատ մշակույթի տուն, փող.1, շենք 40
4	Արթիկ համայնքի Սպանդարյան բնակավայր 1585	1300	ժ+անհապաղ 700 մարդ	մարդատար 60 բեռնատար 10 600 մարդ	4	Արթիկ համայնքի Գեղանիստ բնակավայր 1258	3,3	բարձրադիր գոտի	ժ+1ժ 20ր	14,5	<u>2 հատ՝ U-40 սարքին</u> գ.Սպանդարյան, վարչական շենք՝ U-40 միաֆազ, Սպանդարյանի միջնակարգ դպրոց՝ U-40 եռաֆազ
5	Արթիկ համայնքի Գետափ բնակավայր 877	200	ժ+անհապաղ --------	մարդատար 50 միկրոավտոբուս 1 բեռնատար 6 200 մարդ	5	Արթիկ համայնքի Անուշավան բնակավայր 2155	2	բարձրադիր գոտի	ժ+50ր	18,5	<u>2 հատ՝ U-40 անսարք</u> գ.Գետափ, ակումբի շենք՝ U-40 եռաֆազ, Գետափի միջնակարգ դպրոց՝ U-40 եռաֆազ

6	Արթիկ համայնքի Փանիկ բնակավայր 2982	980	ժ+անհապաղ --------	մարդատար, 157 միկրոավտոբուս 5 ավտոբուս 1 բեռնատար 13 980 մարդ	6	Արթիկ համայնքի Մեղրաշեն բնակավայր 1267	2	բարձրադիր գոտի	ժ+40ժ	25,4	<u>2 հատ՝ U-40 սարքին</u> գ.Փանիկ, վարչական շենք՝ U-40 միաֆազ, Փանիկի միջնակարգ դպրոց՝ U-40 եռաֆազ
7	Արթիկ համայնքի Մեղրաշեն Բնակավայր 1267	1050	ժ+անհապաղ 785 մարդ	մարդատար 32 միկրոավտոբուս 1 բեռնատար 3 265 մարդ	7	Արթիկ համայնքի Մեղրաշեն բնակավայր բարձրադիր գոտի, 1267	0,5	բարձրադիր գոտի	ժ+30ր	25	**<u>1 հատ՝ U-40</u>** <u>սարքին</u> գ.Մեղրաշեն, վարչական շենք, փող.1, շենք 6
8	Արթիկ համայնքի Նոր Կյանք բնակավայր 1624	450	ժ+անհապաղ 450 մարդ	-----	8	Արթիկ համայնքի Նոր Կյանք բնակավայր բարձրադիր գոտի, 1624	0,5-1	բարձրադիր գոտի	ժ+40ր	30	**<u>1 հատ՝ U-40</u>** <u>սարքին</u> գ. Նոր Կյանք, վարչական շենք, փող.4, շենք 1
9	Արթիկ համայնքի Վարդաքար բնակավայր 668	320	ժ+անհապաղ 320 մարդ	------	9	Արթիկ համայնքի Վարդաքար բնակավայր բարձրադիր գոտի, 668	0,5-1	բարձրադիր գոտի	ժ+40ր	34,5	**<u>1 հատ՝ U-40</u>** <u>սարքին</u> գ. Վարդաքար, վարչական շենքի, դիմաց փող.5, շենք 19
Ընդամենը տարահանվող		**8246**									

Սառնաղբյուրի ջրամբար											
1	Անի համայնքի Ձորակապ բնակավայր 1279	590	ժ+անհապաղ 160 մարդ	մարդատար 80 բեռնատար 1 430 մարդ	1	Արթիկ համայնքի Պեմզաշեն բնակավայր 3164	9	բարձրադիր գոտի	ժ +2ժ	2,8	2 հատ՝ U-40 սարքին գ.Ձորակապ, վարչական շենք՝ U-40 , Ձորակապի միջնակարգ դպրոց՝ U-40
2	Անի համայնքի Մարալիկ քաղաք 7369	3800	ժ+անհապաղ 1015 մարդ	մարդատար 214 միկրոավտոբուս 4 ավտոբուս 36 բեռնատար 19 2785մարդ	2	Անի համայնքի Քարաբերդ 1157 և Ձիթհանքով բնակա-վայրեր, 1458	10	բարձրադիր գոտի	ժ +3ժ.15 ր.	4,0	2 հատ՝ U-40 սարքին ք.Մարալիկ, քաղաքապետարանի շենք՝ U-40 , Մանկապատանեկան մարզադպրոցի շենք ՝ U-40
3	Արթիկ համայնքի Լուսակերտ բնակավայր 644	631	ժ+անհապաղ 371	Մարդատար 22, բեռնատար 5, 260 մարդ	3	Արթիկ համայնքի Հովտաշեն բնակավայր 361	3	բարձրադիր գոտի	ժ +1ժ.	15,0	**1 հատ՝ U-40** սարքին գ. Լուսակերտ, Էլեկտրոենթակայանի վրա փող.6,շենք 10
4	Արթիկ համայնքի Սարատակ բնակավայր 1363	350	ժ+անհապաղ --------	մարդատար 40 ավտոբուս 1 բեռնատար 11 350 մարդ	4	Արթիկ համայնքի Վարդաքար բնակավայր 668	4,5	բարձրադիր գոտի	ժ +1ժ.30 ր.	14,0	**1 հատ՝ U-40** սարքին գ. Սարատակ, Սարատակի միջնակարգ դպրոց
5	Ախուրյան համայնքի Բենիամին բնակավայր 741	727	ժ+ 15ր. 502 մարդ	մարդատար 15 ավտոբուս 1 բեռնատար 4 225 մարդ	5	Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայր 742	6	բարձրադիր գոտի	ժ + 3ժ.	17,0	**1 հատ՝ U-40** սարքին գ. Բենիամին, Ակումբի շենք փող.1, շենք 22

6	Ախուրյան համայնքի Ազատան բնակավայր 5419	1892	ժ+15ր.	Մարդատար 750, ավտոբուս 3, միկրոավտո-բուս, 2 բեռնատար 20, 1892 մարդ	6	Ախուրյան համայնքի Ազատան բնակավայր, չջրաձծկվող տարածք 5419		բարձրադիր գոտի	ժ + 45ր.	20,5	<u>2 հատ՝ U-40 սարքին</u> գ.Ազատան, վարչական շենք՝ U-40 միաֆազ , Մշակույթի տուն փող.1, շենք 15.՝ U-40 եռաֆազ
7	Ախուրյան համայնքի Ղարիբջանյան բնակավայր 1005	600	ժ+20ր. 360 մարդ	մարդատար 24 ավտոբուս 2 բեռնատար 2 240 մարդ	7	Գյումրի 158225	2	բարձրադիր գոտի	ժ + 40ր.	23,0	<u>3 հատ՝ U-40E սարքին</u> գ.Ղարիբջանյան, վարչական շենք՝ U-40E, Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց՝ U-40E նախկին «Ախուրյան-կայարան»կայարանամերձ տարածք, 11փողոց. 4/4 տուն U-40E
8	Ախուրյան համայնքի Գետք բնակավայր 613	300	ժ+25ր. ----	մարդատար 32 բեռնատար 14 300 մարդ	8	Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայր 745	4	բարձրադիր գոտի	ժ + 1ժ.20ր.	23,0	<u>3 հատ, որից՝</u> <u>1 հատ՝**U-40** սարքին,</u> <u>**2 հատ՝**U-40E սարքին</u> գ.Գետք, վարչական շենք՝ **U-40,** U-40E, Գետքի միջնակարգ դպրոց՝ U-40E
Ընդամենը տարահանվող		**8890**									

Վարդաքարի ջրամբար											
1	Արթիկ համայնքի Հովտաշեն բնակավայր 376	300	Ժ+անհապաղ 200 մարդ	մարդատար 20, 100 մարդ	1	Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայր 742	7,8	բարձրադիր գոտի	անհապաղ	0,4	**1 հատ՝ U-40** սարքին գ. Հովտաշեն, վարչական շենք, փող.1, տուն 10
2	Արթիկ համայնքի Հոռոմ բնակաբայր 2223	890	Ժ+անհապաղ 290 մարդ	մարդատար 72, բեռնատար 8, 600 մարդ	2	Արթիկ համայնքի Հայրենյաց բնակավայր 780	5,0	բարձրադիր գոտի	անհապաղ	2	2 հատ՝ U-40 սարքին գ.Հոռոմ, վարչական շենք՝ U-40, Հոռոմի միջնակարգ դպրոց՝ U-40
3	Արթիկ համայնքի Սարատակ բնակավայր 1363	500	Ժ+անհապաղ --------	մարդատար 40, ավտոբուս 1, բեռնատար 11 500 մարդ	3	Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայր 742	7,3	բարձրադիր գոտի	անհապաղ	4	**1 հատ՝ U-40** սարքին գ. Սարատակ, Սարատակի միջնակարգ դպրոց
4	Արթիկ համայնքի Լուսակերտ բնակավայր 644	240	Ժ+անհապաղ --------	մարդատար 22, բեռնատար 5, 240 մարդ	4	Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայր 917	6,2	բարձրադիր գոտի	անհապաղ	4,2	**1 հատ՝ U-40** սարքին գ. Լուսակերտ, Էլեկտրոենթակայանի վրա փող.6,շենք 10
5	Ախուրյան համայնքի Բենիամին բնակավայր 741	220	Ժ+անհապաղ 25 մարդ	մարդատար 15, բեռնատար 4 ավտոբուս 1, 195 մարդ	5	Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայր 742	11,8	բարձրադիր գոտի	անհապաղ	5,0	**1 հատ՝ U-40** սարքին գ. Բենիամին, Ակումբի շենք փող.1, շենք 22

6	Ախուրյան համայնքի Ազատան բնակավայր 5419	1892	ժ+10ր 1892 մարդ	------	6	Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի բարձրադիր գոտի 5419	0,5	բարձրադիր գոտի	ժ+20ր	9,0	**<u>2 հատ՝ U-40</u>** <u>սարքին</u> գ.Ազատան, վարչական շենք՝ U-40 (միաֆազ), Ազատանի մշակույթի տուն՝ U-40 (եռաֆազ)
7	Ախուրյան համայնքի Ղարիբջանյան բնակավայր 1005	600	ժ+ 20ր 360 մարդ	մարդատար 24, ավտոբուս 2, բեռնատար 2 240 մարդ	7	Գյումրի 158225	2	բարձրադիր գոտի	ժ+40 ր	12,0	<u>3 հատ՝ U-40E սարքին</u> գ.Ղարիբջանյան, վարչական շենք՝ U-40E, Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց՝ U-40E նախկին «Ախուրյան-կայարան» կայարանամերձ տարածք, 11փողոց. 4/4 տուն U-40E
8	Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայր 1120	805	ժ+30ր 430 մարդ	մարդատար33, ավտոբուս 1, բեռնատար 6, 375 մարդ	8	Ախուրյան համայնքի Ոսկեհասկ բնակավայր 1966	1,7	բարձրադիր գոտի	ժ+30 ր	16,0	<u>4 հատ, որից՝</u> <u>2 հատ՝ MS-190 սարքին,</u> <u>**2 հատ՝**U-40E սարքին,</u> գ.Ախուրիկ, վարչական շենք՝ 2 հատ-MS-190, U-40E, Ախուրիկի միջնակարգ դպրոց՝ U-40E,

9	Ախուրյան համայնքի Գետք բնակավայր 613	450	ժ+30ր ------	մարդատար 32, բեռնատար 14, 450 մարդ	9	Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայր 745	4	բարձրադիր գոտի	ժ+ 1ժ 20 ր	13,5	3 հատ, որից՝ 1 հատ՝**U-40** սարքին, **2 հատ՝**U-40E սարքին գ.Գետք, վարչական շենք՝ **U-40,** U-40E, Գետքի միջնակարգ դպրոց՝ U-40E
Ընդամենը տարահանվող		**5897**									
Թավշուտի ջրամբար											
1	Աշոցք համայնքի Թավշուտ բնակավայր 388	372	ժ+անհապաղ 300 մարդ	Մարդատար 42, բեռնատար 5, 72 մարդ	1	Ամասիա համայնքի Աղվորիկ բնակավայր 167	4	մոտակա բարձրունք 2165,4 մ	ժ+2ժ	1,2	առկա չէ
2	Աշոցք համայնքի Մեծ Սեպասար բնակավայր 920	920	ժ+անհապաղ 625 մարդ	մարդատար 32 բեռնատար 4 միկրոավտոբուս 1 295 մարդ	2	Աշոցք համայնի Ղազանչի բնակավայր 719	5	բարձրադիր գոտի	ժ+2ժ 15ր	5,8	առկա չէ
3	Աշոցք համայնքի Փոքր Սեպասար բնակավայր 229	198	ժ+անհապաղ 108 մարդ	մարդատար 6 ավտոբուս 1 բեռնատար 1 90 մարդ	3	Ամասիա համայնքի Ալվար բնակավայր 300	5	մոտակա բարձրունք 2165,4 մ	ժ+2ժ 20	6,0	առկա չէ

4	Ախուրյան համայնքի Առափի բնակավայր 1720	830	ժ+ 1ժ 520 մարդ	մարդատար 17 ավտոբուս 1 միկրոավտոբուս 1 բեռնատար 6 310 մարդ	4	Ախուրյան համայնքի Առափի բնակավայր 1720	0,5-1	բարձրադիր գոտի	ժ+45ր	37,0	5 հատ, որից՝ 1 հատ՝**U-40** սարքին, **4 հատ՝**U-40E սարքին գ.Առափի, վարչական շենք՝ _**U-40,** U-40E, Առափիի միջնակարգ դպրոց՝ U-40E, քարաշեն ավտոտնակի վրա, 3-րդ փ. 66շ.՝ U-40E պանրի գործարան «Harmony Farm» U-40E
5	Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայր 1120	300	ժ+1ժ 10ր 300 մարդ	-------	5	Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայր բարձրադիր գոտի, 1120	0,5	բարձրադիր գոտի	ժ+30ր	41,0	4 հատ, որից՝ 2 հատ՝ MS-190 սարքին, **2 հատ՝**U-40E սարքին, գ.Ախուրիկ, վարչական շենք՝ MS-190**,** U-40E MS-190**,** Ախուրիկի միջնակարգ դպրոց՝ U-40E,
6	Ախուրյան համայնքի Ղարիբջանյան բնակավայր 1005	321	ժ+1ժ 15ր 321 մարդ	--------	6	Ախուրյան համայնքի Ղարիբջանյան բնակա-վայր, բարձ-րադիր գոտի 1005	0,5-1	բարձրադիր գոտի	ժ+45ր	41,0	3հատ՝ U-40E սարքին գ.Ղարիբջանյան, վարչական շենք՝ U-40E, Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց՝ U-40E նախկին «Ախուրյան-կայարան»կայարանամե

											րձ տարածք, 11փողոց. 4/4 տուն U-40E
7	Ախուրյան համայնքի Գետք բնակավայր 613	450	ժ+ 1ժ 20ր 312 մարդ	Մարդատար 32, բեռնատար 14, 138 մարդ	7	Անի համայնքի Գուսանագյուղ բննակավայր 917	8	բարձրադիր գոտի	ժ+3ժ ր	43,0	<u>3 հատ, որից՝</u> <u>1 հատ՝**U-40** սարքին,</u> <u>**2 հատ՝**U-40E սարքին</u> գ.Գետք, վարչական շենք՝ **U-40,** U-40E, Գետքի միջնակարգ դպրոց՝ U-40E
8	Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայր 745	174	ժ+ 1ժ 25ր -----	մարդատար 57 բեռնատար 1 174 մարդ	8	Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայր 917	4	բարձրադիր գոտի	ժ+1ժ 20 ր	48,0	<u>**1 հատ՝ U-40**E սարքին</u> գ.Բայանդուր, Վարչական շենք, 8-րդ փ. 7շ.
9	Ախուրյան համայնքի Երազգավորս բնակավայր 1579	435	ժ+ 1ժ 25ր -	Մարդատար 51, բեռնատար 6, 435 մարդ	9	Անի համայնքի Շիրակավան բնակավայր 793	8	բարձրադիր գոտի	ժ+3ժ	46,0	*<u>2 հատ, որից՝</u>* *<u>1 հատ՝**U-40** սարքին,</u>* *<u>**1 հատ՝**U-40E սարքին</u>* *գ.Երազգավորս, վարչական շենք՝ U-40E,* *Երազգավորսի միջնակարգ դպրոց՝ U-40*
Ընդամենը տարահանվող		**4000**									

ԳԼՈՒԽ 8
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՔԻՄԻԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏԻ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

38. Քիմիական վտանգավոր օբյեկտի՝ «Գյումրի-գարեջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հարակից տարածքի թվով 900 բնակիչներ վարակված ամպի արագ տարածման պատճառով, որպես կանոն, դուրս չեն բերվում վտանգավոր գոտուց, այլ՝ ժամանակավոր պատսպարվում են բնակելի տարածքներում՝ ապահովելով դրանց հերմետիկությունը և օգտագործելով շնչառական օրգանների համար անհատական պաշտպանության միջոցներ, և պետք է գտնվեն շենքի ներքևի հարկերում՝ կապված օգտագործվող քիմիական վտանգավոր նյութի՝ ամոնիակի հետ:

39. Քիմիական վտանգավոր օբյեկտի վթարի դեպքում ազդարարման կարգը՝

1) քիմիական վտանգավոր օբյեկտում վթարի սպառնալիքի և առաջացած վթարի դեպքում օբյեկտի անձնակազմի և օբյեկտին հարակից բնակչության ազդարարման մասին որոշումն ընդունում է օբյեկտի ղեկավարը և իր հրահանգով սառնարանակոմպրեսորային արտադրամասի պետի կողմից իրականացվում է օբյեկտի անձնակազմի, հարակից կազմակերպությունների և բնակչության ազդարարումը՝ էլեկտրական շչակի միջոցով.

2) վթարի մասին ահազանգը օբյեկտի ղեկավարը (կամ պատասխանատու աշխատակիցը) հաղորդում է ՃԿԿ-ի ՕՀՀ-ին և ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին.

3) ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ ՇՄՓՎ) պետը վթարի մասին զեկուցում է ՀՀ Շիրակի մարզպետին, ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրենին և իր հրահանգով՝ ՃԿԿ-ի օրվա հերթափոխի հերթապահը զեկուցում է Փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն) և իրականացնում մարզի ղեկավար կազմի և տարահանման մարզային հանձնաժողովի ազդարարում.

4) ՀՀ ՆԳՆ ՓԾ ՇՄՓՎ պետը զանգվածային լրատվական միջոցներով դիմում է վտանգավոր օբյեկտի սանիտարական գոտում գտնվող բնակչությանը՝ համապատասխան տեքստով և հիշեցնում վարվելակերպի կանոնների մասին:

40. Բնակչության տարահանման կազմակերպումը կախված է ռեալ ստեղծված իրավիճակից և վթարի մասշտաբներից:

41. Վարակված գոտուց տարահանվող բնակչության տարահանման հավաքակայան նախատեսվում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Երևանյան խճուղում տեղակայված

մարզի «Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքը և որպես տեղաբաշխման վայր նախատեսվում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Անի թաղամասում տեղակայված մարզի «Գյումրու թիվ 37 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքը, որտեղ էլ իրականացվում է բնակչության հաշվառումը:

42. Տարահանման համար նախատեսվում է թվով 4 ավտոբուս և 52 միկրոավտոբուս: Տարահանումն իրականացվելու է հաշվի առնելով Աղյուսակ № 3-ում ներկայացված՝ Գյումրի համայնքի տարածքի քամիների ուղղության և անդորրի տարեկան կրկնելիության (ըստ գոտիների, ամիսների) վերաբերյալ տեղեկությունները և տվյալ պահին առկա բնակլիմայական պայմանները:

Աղյուսակ № 3

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՔԱՄԻՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԴՈՐՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԿՐԿՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ԸՍՏ ԳՈՏԻՆԵՐԻ, ԱՄԻՍՆԵՐԻ)

Հ/հ	Մարզի բնակավայրի անվանումը	Ամիսներ	Քամիների տոկոսային մեծությունները հորիզոնի նկատմամբ՝ ըստ հիմնական ուղղությունների								
			Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան	Անդորր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	ք.Գյումրի	հունվար	22	13	9	10	8	11	14	13	87
		փետրվար	21	15	5	5	9	19	12	14	73
		մարտ	23	29	13	4	5	8	9	9	60
		ապրիլ	21	34	11	1	7	13	7	6	42
		մայիս	20	26	14	4	9	12	9	6	44
		հունիս	18	41	19	3	4	5	4	6	38
		հուլիս	20	52	17	1	2	3	2	3	26
		օգոստոս	16	58	16	1	1	3	2	3	30
		սեպտեմբեր	19	50	12	1	3	7	4	4	41
		հոկտեմբեր	20	32	7	2	7	11	11	10	60
		նոյեմբեր	14	36	7	2	6	13	13	9	66
		դեկտեմբեր	21	13	8	7	6	19	16	10	84
		տարեկան	**19**	**40**	**14**	**2**	**5**	**8**	**6**	**6**	**54**

ԳԼՈՒԽ 9

ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏԻ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

43. Այս վթարը կրում է տեղային բնույթ: Բնակչության տարահանման մասին որոշումն ընդունվում է ճառագայթային իրավիճակի կանխատեսման հիման վրա:

44. Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանով նախատեսված է ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի բնաչությունը՝ թվով 32500 մարդ, տարահանել և ժամանակավորապես վերաբնակեցնել մարզի Գյումրի համայնքում:

45. ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքից դեպի Շիրակի մարզի Գյումրի համայնք բնակչության տարահանումը նախատեսված է իրականացնել երկաթուղային շարժակազմերի միջոցով (30 վագոն):

46. Տարահանված բնակչությանն ընդունելու համար երկաթգծի Գյումրու կայարանում ծավալվում է ընդունման հավաքակետ, որտեղ ժամանած բնակչությունը հաշվառվելուց հետո նախապես հատկացված տրանսպորտային միջոցներով տեղափոխվում են վերաբնակեցման համար նախատեսված ժամանակավոր կացարաններ:

47. Որպես ժամանակավոր կացարաններ Գյումրի համայնքում առանձնացված են թվով 62 օբյեկտներ, որոնց ցանկը (տվյալները) ներկայացված է Աղյուսակ №4-ում:

Ց Ա Ն Կ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՎ (ԿԱՄ) ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՎԹԱՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻՑ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ

Հ/հ	Կազմակերպության (օբյեկտի) անվանումը	Հասցեն	Հարկադրումների քանակը	Ընդհանուր մակերեսը (քառակուսի մետր)	Հատկացվելիք հնարավոր մակերեսը (քառակուսի մետր)	Ապաստանող մարդկանց թիվը	Շենքի տեխնիկական վիճակը	Պատասխանատու	Հեռախոս
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**
1. ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵՎ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՋԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՈԱԿ-ՆԵՐԻ ՇԵՆՔԵՐ, ԱՌԿԱ ՄԱՍՆԱՇԵՆՔ									
1)	«Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Աճեմյանի 40	1	5200	2600	940	բավարար	տնօրեն	0312-5-83-96
2)	«Գյումրու թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Նժդեհի 11	3	2400	1200	480	բավարար	տնօրեն	0312-5-05-76 093-19-00-13
3)	«Գյումրու թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Կամոյի 173	2	4280	2200	780	բավարար	տնօրեն	0312-4-40-74 098-84-11-17
4)	«Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Մատնիշյանի 301	2	3890	1550	620	բավարար	տնօրեն	0312-5-13-59 093-20-89-24

5)	«Գյումրու թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Թումանյանի 20	3	5715	2750	1250	բավարար	տնօրեն	0312-5-18-67 094-21-21-47
6)	«Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Ալեք Մանուկյանի 4	3	3700	1500	600	բավարար	տնօրեն	0312-5-15-02 031-25-06-68
7)	«Գյումրու թիվ 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Լիսինյանի 6	2	5113	2700	1110	բավարար	տնօրեն	0312-4-28-36 098-00-98-60
8)	«Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Հաղթանակի պողոտայի 40	3	1925	750	300	բավարար	տնօրեն	0312-5-51-47 055-25-01-10
9)	«Գյումրու թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Գորկու 77	2	5251	1900	760	բավարար	տնօրեն	0312-4-39-91 094-02-44-64
10)	«Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Արամ Խաչատրյանի 27	2	13694	4675	1700	բավարար	տնօրեն	0312-6-42-91 098-94-98-49
11)	«Գյումրու թիվ 15 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Եսայանի 34/1	3	4963	2000	800	բավարար	տնօրեն	0312-3-49-30 077-70-75-75
12)	«Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Լազոյի 2	2	3742	1500	600	բավարար	տնօրեն	0312-4-13-80 094-84-55-13
13)	«Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Վազգեն Սարգսյանի 13	2	2241	900	360	բավարար	տնօրեն	0312-3-49-24 093-26-03-10
14)	«Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Թետչերի 1	1	4600	1850	740	բավարար	տնօրեն	093/27-77-97
15)	«Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Մկրտչյանի 47	2	4910	2000	800	բավարար	տնօրեն	0312-3-24-57 0312-6-94-01 094920021

16)	«Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Մուշ 2/2 թաղամաս 9-րդ փողոց, շենք 5	2	5320	2350	940	բավարար	տնօրեն	098/09-01-23
17)	«Գյումրու Գ. Սարյանի անվան թիվ 24 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Շիրակացու 173	3	3000	1200	480	բավարար	տնօրեն	093/19-75-65
18)	«Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Պուշկինի 101	3	3001	1200	480	բավարար	տնօրեն	0312-5-51-01 098-53-99-50
19)	«Գյումրու թիվ 26 ավագ դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Տիգրան Մեծի 27	2	1172	470	188	բավարար	տնօրեն	0312-5-27-04 077-19-31-80
20)	«Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Գարեգին Ա-ի 6 ա	2	4250	2130	852	բավարար	տնօրեն	0312-4-23-37 094-09-12-82
21)	«Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Երևանյան խճուղու 91	2	1693	680	272	բավարար	տնօրեն	0312-4-13-06 094-40-90-46
22)	«Գյումրու թիվ 29 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Մանուշյանի 7	3	4500	1800	720	բավարար	տնօրեն	0312-3-93-23 093-35-49-49
23)	«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Շչեդրինի 7	2	1037	400	160	բավարար	տնօրեն	077/43-47-43
24)	«Գյումրու թիվ 31 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Խրիմյան Հայրիկի 1-ին թաղամաս	2	1372	550	220	բավարար	տնօրեն	0312-3-31-24 098-46-53-54
25)	«Գյումրու թիվ 32 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Կոմինտերնի 1	2	2300	950	380	բավարար	տնօրեն	0312-5-37-16 077-34-23-79

26)	«Գյումրու տնտեսագիտական վարժարան» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Կիրովականյան 21	2	1200	480	192	բավարար	տնօրեն	0312-3-39-62 0312-3-19-01 093-82-20-75
27)	«Գյումրու թիվ 37 ավագ դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Չարենցի 12	2	9400	3625	1280	բավարար	տնօրեն	0312-2-78-07
28)	«Գյումրու թիվ 38 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Բուլվարային 7	2	1035	400	160	բավարար	տնօրեն	093/20-17-32
29)	«Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Վերֆելի 4	1	1325	530	212	բավարար	տնօրեն	0312-6-36-97 077-48-43-84
30)	«Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Չարենցի 4	2	4570	1800	900	բավարար	տնօրեն	093-74-16-41
31)	«Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Շերամ 2թաղ. 2-2 ա/6	2	400	160	64	բավարար	տնօրեն	094-00-03-39
32)	«Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Չարենցի 12/1	2	3800	1520	608	բավարար	տնօրեն	093/01-31-62
33)	«Գյումրու «Ակադեմիական» վարժարան» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Շչերբինայի 4	2	6500	2225	1070	բավարար	տնօրեն	093-00-05-90
34)	«Գյումրու №45 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Այգաբաց 3 շարք 36	2	1238	500	200	բավարար	տնօրեն	0312-4-17-70 093-77-37-36
35)	Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Թամանյանի 17	2	6560	2350	940	բավարար	տնօրեն	0312-3-28-23 094-91-70-00

36)	«Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի մասնաշենք	Գյումրի քաղաք, Շիրակացու 5	2	2500	1000	400	բավարար	ռեկտոր	0312-3-21-99 0312-2-66-00 0312-2-77-70 094-45-45-34
37)	«Գյումրու տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Խրիմյան Հայրիկի 56	1	1587	630	252	բավարար	տնօրեն	0312-3-67-10 094-41-50-42
38)	«Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Գյուղ Ազատան փ. 19 շենք 17	2	700	100	40	բավարար	տնօրեն	0312-3-14-12 094-12-14-12
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը				**140084**	**57125**	**22850**			
2. ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐ									
1)	«Շիրակի Մ. Նալբանդյանի պետական համալսարան» հիմնադրամ	Գյումրի քաղաք, Պարույր Սևակի 4	2	7500	3400	1200	բավարար	ռեկտոր	094-45-45-34 0312-2-66-00 0312-2-77-70
2)	«ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղ» հիմնադրամ	Գյումրի քաղաք, Միեր Մկրտչյանի 2	3	5950	2780	950	բավարար	տնօրեն	031243528, 091-20-16-94
3)	Գյումրու «Պրոգրես» համալսարան ԱԿ	Գյումրի քաղաք, Տիգրան Մեծի 1	3	5950	2380	1270	բավարար	ռեկտոր	0312-5-10-05, 0312-5-51-80 077-09-92-22
4)	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» Գյումրու մասնաճյուղ ԲՈՒՀ	Գյումրի քաղաք, Վազգեն Սարգսյանի 32	3	1000	400	160	բավարար	տնօրեն	093-19-54-34, 0312-3-58-44
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը				**20400**	**8960**	**3580**			

3.ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՔՈԼԵՋՆԵՐԻ (ՊՈԱԿ)ՇԵՆՔԵՐ, ԱՌԿԱ ՄԱՍՆԱՇԵՆՔ									
1)	«Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Տիգրան Մեծի 29	3	2020	800	320	բավարար	տնօրեն	0312-5-19-00 093-72-94-89
2)	«Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի մասնաշենք	Գյումրի քաղաք, Վազգեն Սարգսյանի 28	4	2800	1355	540	բավարար	ռեկտոր	094-45-45-34 0312-2-66-00 0312-2-77-70
3)	«Գյումրու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Շիրազի 3	3	2090	800	320	բավարար	տնօրեն	0312-3-35-13 094-155-200
4)	«Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Մանուշյանի 4-րդ թաղամաս 30	1	2030	800	320	բավարար	տնօրեն	0312-3-12-98 094-44-00-74
5)	ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու Կարա-Մուրզայի » անվան պեռական երաժշտական քոլեջ	Գյումրի քաղաք, Ղուկասյան փող. 30	3	1433	300	120	բավարար	տնօրեն	077/77-87-74
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը				**10373**	**4 055**	**1620**			
4. **ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՇԵՆՔԵՐ**									
1)	«Ա.Սարգսյանի անվան մանկապատանեկան խաղերի մարզադպրոց» ՀՈԱԿ	Գյումրի քաղաք, Տիմիրյազևի 27/2	1	1250	800	320	բավարար	տնօրեն	093/77-73-28
2)	«Մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	Գյումրի քաղաք, Շահումյանի 214/5	1	1150	800	320	բավարար	տնօրեն	094/50-50-31

3)	«Բռնցքամարտի մարզադպրոց» ՀՈԱԿ	Գյումրի քաղաք, Վազգեն Սարգսյանի 22	1	2750	1500	600	բավարար	տնօրեն	0312-3-12-15 093/71-91-74
4)	«Ազատ ոճի ըմբշամարտի մարզադպրոց» ՀՈԱԿ	Գյումրի քաղաք, Աբովյանի 258/1	1	250	180	70	բավարար	տնօրեն	5-51-58 077/76-77-79
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը				**5400**	**3280**	**1310**			
5. **ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՇԵՆՔԵՐ**									
1)	«Տիգրանյանի անվան թիվ 1 արվեստի դպրոց» ՀՈԱԿ	Գյումրի քաղաք, Աբովյանի 260	2	300	150	60	բավարար	տնօրեն	0312-5-95-64
2)	«Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	Գյումրի քաղաք, Ռուսթավելու 3	1	160	80	30	բավարար	տնօրեն	0312-5-27-65
3)	«Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	Գյումրի քաղաք, Շչերբինայի 3ա	2	1500	700	280	բավարար	տնօրեն	0312-3-09-16
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը				**1960**	**930**	**370**			
6.ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ									

1)	«Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ	Գյումրի քաղաք, Սայաթ-Նովայի 4	2	3000	2000	800	բավարար	տնօրեն	060-38-10-10 060-38-10-13 060-38-10-14
2)	«Կինոթատրոն Մոսկվա» ՍՊԸ-ի «Հոկտեմբեր» կինոթատրոն	Գյումրի քաղաք, Խաչատուր Աբովյանի 143	2	800	400	150	բավարար	տնօրեն	0312-5-32-86 0312-5-08-33 098-51-81-31
3)	«Գյումրու մարզամշակութային կենտրոն» ՍՊԸ	Գյումրի քաղաք, Միեր Մկրտչյանի 49	2	2000	1600	640	բավարար	տնօրեն	093-26-61-63 098/18-56-77 093-43-10-59
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը				**5800**	**4000**	**1590**			
7.**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ՇԵՆՔԵՐ**									
1)	«ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ»	Գյումրի քաղաք, Մայակովսկու 70 .	2	600	400	120	բավարար	տնօրեն	0312-5-00-51 0312-5-00-52
2)	«ԱՐԱՔՍ»	Գյումրի քաղաք, Շիրազի 25	2	1100	600	200	բավարար	տնօրեն	0312-5-11-99 094-04-02-03
3)	«ՓԱՐՎԱՆԱ ՕՋԱԽ»	Գյումրի քաղաք, Օդանավակայանի խճուղի	2	900	600	200	բավարար	տնօրեն	091-50-11-33
4)	«ԳՅՈՒՄՐԻ»	Գյումրի քաղաք, Գարեգին Նժդեհի 5/10	4	2000	1100	580	բավարար	տնօրեն	0312-3-94-44 098/03-94-55
5)	«ՄԻԼԼԵՆԻՈՒՄ»	Գյումրի քաղաք, Խրիմյան Հայրիկի 46ա	1	400	250	80	բավարար	տնօրեն	098/15-70-60
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը				**5000**	**2950**	**1180**			
Ը Ն Դ ՀԱ Ն ՈՒ Ր Ը				**189017**	**81300**	**32500**			

48. Ժամանակավոր կացարաններում տարահանված բնակչության ընդունումը, հաշվառումը և տեղաբաշխումը կատարվում է օբյեկտներում ստեղծված տարահանման ընդունման հանձնաժողովների կողմից:

49. Ժամանակավոր կացարաններում կազմակերպվում է տարահանված բնակչության սննդով և առաջին անհրաժեշտության առարկաներով ապահովումը:

50. Տեղաբաշխման վայրերում տարահանված բնակչության կենսագործունեությանն ուղղված միջոցառումների ապահովումն իրականացվում է մարզային համապատասխան ծառայությունների և կազմակերպությունների միջոցով:

51. Տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման, ինչպես նաև նրանց առաջին անհրաժեշտության առարկաներով և կենսագործունեության ապահովման միջոցառումների ընթացքի վերաբերյալ պարբերաբար տեղեկացվում է տարահանման հանրապետական հանձնաժողովին:

ԳԼՈՒԽ 10
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

52. Ակտիվ սողանքային տարածք է ձևավորված մարզի ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Առափի բնակավայրի գերեզմանատան հարակից արևելյան հատվածում: Բնակավայրի սողանքային տեղամասը գեոմորֆոլոգիական տեսակետից ներկայացվում է մոտ 2 կիլոմետր երկարությամբ և մոտ 30^0 թեք լանջով: Ամբողջ լանջը բնութագրվում է սողանքին բնորոշ պոկման, կտրման պատերով և սողանքային գոտու ինժեներաերկրաբանական կառուցվածքը բնութագրվում է 3-5 մետր հզորությամբ մանրաբեկոր խառնուրդներով, կավավազային գրունտներով, որոնք տեղակայված են դեղնականաչ կավային շերտախմբի վրա, վերջիններս հանդիսանում են ջրամերժ շերտ ստորերկրյա ջրերի համար:

53. Սողանքի շարժման ակտիվացման նախանշաններ ի հայտ գալու ժամանակ Մարզի Ախուրյան համայնքի ղեկավարը տեղեկացնում է ՀՀ ՆԳՆ ՓԾ ՇՄՓՎ ՃԿԿ: ՀՀ ՆԳՆ ՓԾ ՇՄՓՎ պետը ստեղծված իրավիճակի վերաբերյալ զեկուցում է ՀՀ Շիրակի մարզպետին և ՀՀ ՆԳՆ ՓԾ ՇՄՓՎ պետի հրահանգով ՃԿԿ ՕՀՀ-ն զեկուցում է ՀՀ ՆԳՆ ՓԾ ՃԿԱԿ և իրականացնում է մարզի բնակչության պաշտպանության համակարգի ղեկավար կազմի ազդարարումը: Մարզի Առափի բնակավայրի բնակչության ազդարարումը կազմակերպում և իրականացնում է բնակավայրի վարչական ղեկավարը:

ՀՀ ՆԳՆ ՓԾ ՇՄՓՎ պետը մարզում գործող զանգվածային լրատվամիջոցներով իրականացնում է բնակչության իրազեկումը և հիշեցնում (ներկայացնում) է վարվելակերպի կանոնները:

54. Մարզի Ախուրյան համայնքի Առափի բնակավայրի սողանքային վտանգավոր գոտու թվով 400 բնակիչների տարահանումը և երկարատև տեղաբաշխումը նախատեսվում է մարզի Գյումրի քաղաքի Մուշ թաղամասի վարչական տարածքում՝ տրամադրելով ժամանակավոր կացարաններ, հիմնելով տնակային ավան:

ԳԼՈՒԽ 11
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

55. Տարահանման միջոցառումների ապահովումն իրականացվում է պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների, անհրաժեշտության դեպքում՝ նաև քաղաքացիական պաշտպանության ծառայությունների միջոցով:

56. *Բնակչության տարահանման կազմակերպված անցկացումն իր մեջ ներառում է տրանսպորտային, կապի, ինժեներական, կոմունալ-տեխնիկական, բժշկական, հասարակական կարգի պահպանման, նյութատեխնիկական, առևտրի և սննդի մատակարարման, միջոցառումների ապահովումը:*

57. *Տրանսպորտային ապահովումն ընդգրկում է տարահանման փոխադրումների համար նախատեսված տրանսպորտային միջոցների նախապատրաստման, բաշխման և շահագործման միջոցառումների համալիր:*

58. *Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովումը կազմակերպվում և իրականացվում է ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության, անհրաժեշտության դեպքում նաև քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային տրանսպորտային ծառայության կողմից:*

59. *Բնակչության տարահանման համար օգտագործվում են մարդատար ավտոմեքենաներ (ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, թեթև մարդատար ավտոմեքենաներ), անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել նաև բեռնատար կողային և ինքնաթափ ավտոմեքենաներ ու ավտոկցորդներ, որոնք նախապես պետք է հարմարեցվեն մարդկանց փոխադրելու համար:*

60. Տարահանումն իրականացնող տրանսպորտային միջոցներն ապահովվում են ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքայիւն ոստիկանության գլխավոր վարչության Շիրակի մարզային բաժինների կողմից տրված անցագրերով:

61. Տարահանումն ավտոշարասյուներով բաշխվում և իրականացվում է ըստ տարահանման հավաքակայանների:

62. Զորահավաք հայտարարվելու դեպքում տարահանման միջոցառումներում ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ ՊՆ) Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատում ամրագրված ավտոշարասյունները չեն ընդգրկվում:

63. Անձնական օգտագործման թեթև մարդատար ավտոմեքենաներն օգտագործվում են մեկ երթով:

64. Տարահանման ավտոշարասյուններում ընդգրկվող տրանսպորտային միջոցների պատրաստականությունը մշտական տեղակայման վայրերում սահմանվում է մինչև 4 ժամ՝ համապատասխան հրահանգ ստանալու պահից:

65. Բժշկական ապահովումն ընդգրկում է տարահանման (ընդունման) հավաքակայաններում, միջանկյալ նստեցման և իջեցման կետերում, տարահանման երթուղիներում տարահանվողներին ժամանակին բժշկական օգնության ցուցաբերման կազմակերպում:

66. Բժշկական օգնության միջոցառումների ապահովումն իրականացվում են ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության, տարահանված բժշկական հիմնարկների, անհրաժեշտության դեպքում նաև քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային բժշկական ծառայության, կողմից՝ սեփական միջոցների հաշվին, պետական բյուջեից հետագա փոխհատուցմամբ (ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով):

67. Տարահանվողների անհետաձգելի բուժօգնության նպատակով, յուրաքանչյուր շարասյունում ընգրկվում է համապատասխան բժշկական գույքով ապահովված բուժաշխատող, որի ներկայությունը կազմակերպում և ապահովում է ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությունը կամ քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային բժշկական ծառայությունը:

68. Բժշկական ապահովումն իր մեջ ընդգրկում է հետևյալ միջոցառումները՝

1) տարահանվածների ժամանակավոր և մշտական տեղակայման վայրերի սանիտարահիգիենիկ վիճակի հսկողությունը,

2) սննդի և ջրի որակի նկատմամբ հսկողության սահմանումը,

3) վարակազերծման միջոցառումների իրականացումը,

4) վարակիչ հիվանդների ժամանակին հայտնաբերումը և մեկուսացումը,

5) բնակչության բաղնիքա-լվացքային սպասարկման կազմակերպման հսկողությունը:

69. Հասարակական կարգի պահպանումն իրականացնում են ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Շիրակի մարզի բաժինները, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանության կազմավորումները, որոնց կողմից իրականացվող միջոցառումները հետևյալն են՝

1) հասարակական կարգի պահպանումը և անվտանգության ապահովումը տարահանման (ընդուման) հավաքակայաններում, միջանկյալ կետերում, նստեցման և իջեցման կետերում, տարահանման երթուղիներում և անվտանգ գոտու տեղաբաշխման վայրերում,

2) տարահանման երթուղիներում երթևեկության կարգավորումը,

3) տարահանվողների հաշվառման կազմակերպումը և տեղեկատվական աշխատանքի (տվյալների բանկի ստեղծում քաղաքացիների գտնվելու վայրի և այլ տեղեկությունների մասին) կազմակերպումը,

4) տարահանման երթուղիների անցողունակության և տարահանված բնակավայրերում ու օբյեկտներում մնացած գույքի պահպանումը:

70. Ինժեներական ապահովումն իրականացնում է ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունը, անհրաժեշտության դեպքում նաև քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ինժեներական և կոմունալ-տեխնիկական ծառայությունները՝ շինարարական կազմակերպությունների հետ միասին՝ անկախ սեփականության ձևից:

71. Տարահանման (ընդունման) հավաքակայանների, միջանկյալ, ինչպես նաև նստեցման և իջեցման կետերի ինժեներական ապահովումն իր մեջ ընդգրկում է՝

1) պաշտպանական կառույցների, վթարային լուսավորության, խմելու ջրի մատակարարման կետերի, սանհանգույցների կահավորումը,

2) տրանսպորտային միջոցների տեղաբաշխման համար բեռնաթափման տարածքների և տարահանվողներին տրանսպորտային միջոցների նստեցման տեղերի կահավորումը,

3) շարժման երթուղիներում բարելավում են ճանապարհները, ուժեղացնում կամուրջները, մաքրում անանցանելի ճանապարահատվածները:

72. Անվտանգ գոտում տարահանված բնակչության տեղեբաշխման վայրերի ինժեներական ապահովումն իր մեջ ընդգրկում է՝

1) տարահանվողների տեղաբաշխման համար նախատեսված շենքերի և շինությունների կահավորումը,

2) բժշկական կետերի, բաղնիքների, ժամանակավոր առևտրական կետերի և այլ կենցաղային օբյեկտների կահավորումը,

3) ջրամատակարարման կետերի կահավորումը:

73. Նյութատեխնիկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված տարահանման, քաղաքացիական պաշտպանության ուժերի, միջոցառումների, ինչպես նաև տուժած բնակչությանն անհրաժեշտ նյութական, տեխնիկական միջոցներով և սննդամթերքով ժամանակին ու անխափան մատակարարմանը:

74. Բնակչության տարահանման ժամանակ սննդամթերքի և նյութատեխնիկական ապահովումն իրականացնում են ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունը, անհրաժեշտության դեպքում նաև քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային առևտրի և սննդի ու նյութատեխնիկական մատակարարման ծառայությունները:

75. Նյութական ապահովման միջոցառումներն ուղղված են նյութական միջոցների արտադրությանը, կուտակմանը, բաշխմանը և նպատակային օգտագործմանը:

76. Տեխնիկական ապահովման միջոցառումներն ուղղված են տեխնիկական միջոցների անխափան շահագործմանը, նրանց տեխնիկական սպասարկմանը, քաղաքացիական պաշտպանության միջոցառումներում ներգրավված տեխնիկայի բոլոր տեսակների շահագործմանն ու նորոգմանը, ինչպես նաև վերանորոգման ստորաբաժանումներին պահեստամասերով և շրջանառու միջոցներով ապահովմանը:

77. Տարահանման մարմիններն ու քաղաքացիական պաշտպանության ուժերը բնակչության պաշտպանության միջոցառումները կազմակերպելու, ինչպես նաև օբյեկտների և նյութական արժեքների պահպանությունը ապահովելու, փրկարարական և այլ աշխատանքներ կատարելու նպատակով ապահովվում են տեխնիկայով, վառելիքաքսուկային նյութերով, ջրով, սննդամթերքով, անհատական պաշտպանության և կապի միջոցներով, շինարարական և այլ տեսակի նյութական ու տեխնիկական միջոցներով, բժշկական գույքով, հագուստով, հատուկ հանդերձանքով և այլ նյութերով:

78. Նյութատեխնիկական ապահովման աղբյուրներ են հանդիսանում նախարարությունների, այլ գերատեսչությունների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) տրամադրության տակ գտնվող նյութական արժեքները, պետական

պահուստի միջոցները և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրած մարդասիրական օգնությունը:

79. Կոմունալ-կենցաղային ապահովումն իրականացնում են ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունը, մարզի համայնքապետարանների բնակարանային-կոմունալ տնտեսության կազմակերպական միավորները, անհրաժեշտության դեպքում նաև քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ինժեներական և կոմունալ-տեխնիկական ծառայությունները:

80. Տարահանված բնակչության կոմունալ-կենցաղային ապահովումն ընդգրկում է՝

1) տարահանված բնակչության և սոցիալական ենթակառուցվածքների օբյեկտների ջրամատակարարման կազմակերպումը,

2) կոմունալ, էներգետիկայի կազմակերպությունների աշխատանքի կազմակերպումը՝ բնակչության և սոցիալական ենթակառուցվածքների օբյեկտների ջերմային և էլեկտրական էներգիայով ապահովման ուղղությամբ,

3) ժամանակավոր և ստացիոնար օբյեկտների ու կենցաղի կետերի (հացի փռերի, առևտրային կետերի, բաղնիքների, լվացքատների) կահավորումն ու կազմակերպումը:

ԳԼՈՒԽ 12
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

81. ՀՀ ՆԳՆ ՓԾ ՇՄՓՎ հետ համատեղ մշակում է բնակչության տարահանման պլանը:

82. Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների հետ համատեղ մշակում է տարահանվող բնակչության պաշտպանությանն ու համակողմանի ապահովմանն ուղղված միջոցառումները:

83. Կազմակերպում է տարահանման (ընդունման) հավաքակայանների անձնակազմերի նախապատրաստումը:

84. Իրականացնում է հսկողություն համայնքներում և կազմակերպություններում տարահանման հանձնաժողովների ստեղծման և նախապատրաստման նկատմամբ:

85. Իրականացնում է հսկողություն համայնքների տարահանման հանձնաժողովների պատրաստականության բերման նկատմամբ:

86. Ճշտում է բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանը, համակողմանի ապահովման միջոցառումները:

87. Կազմակերպում է հետիոտն տարահանման երթուղիների նախապատրաստումը: Հսկում է տարահանված բնակչության ընդունման հավաքակայանների նախապատրաստումը ընդունելության համար:

88. Կապ է պահպանում մարզի համայնքների և կազմակերպությունների տարահանման մարմինների հետ, ապահովում է բնակչության տարահանումը, տեղաբաշխումը ժամանակավոր տեղակայման կետերում և երկարատև բնակության վայրերում:

89. Բնակչության տարահանման իրականացման վերաբերյալ կարգադրություն ստանալուց հետո՝

1) կազմակերպում է տարահանման հավաքակայանների ծավալումը,

2) համակարգում է մարզի համայնքների և կազմակերպությունների տարահանման հանձնաժողովների աշխատանքները,

3) հավաքում և ամփոփում է տվյալներ բնակչության մեկնման (ժամանման) և տեղաբաշխման մասին ու այդ մասին զեկուցում է վերադաս տարահանման հանձնաժողովին,

4) համապատասխան քաղաքացիական պաշտպանության ծառայությունների հետ համատեղ կազմակերպում է մեկնող (ժամանող) բնակչության պաշտպանությունը և համակողմանի ապահովումը:

ԳԼՈՒԽ 13
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

90. Տարահանման մարզային հանձնաժողովի (այսուհետ՝ Տարահանման հանձնաժողով) նախագահ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալը (համապատասխան ոլորտը համակարգող):

91. Տարահանման հանձնաժողովի նախագահը պատասխանատու է հնարավոր աղետի գոտուց բնակչության կազմակերպված դուրս բերման ուղղությամբ անցկացվող համալիր միջոցառումների, ինչպես նաև տարահանված բնակչության՝ անվտանգ տարածքներում առաջնահերթ կենսաապահովման միջոցառումներով ապահովված ժամանակավոր տեղաբաշխման կետերում տեղաբաշխման կազմակերպման համար:

92. Տարահանման հանձնաժողովի նախագահը կրում է պատասխանատվություն Տարահանման հանձնաժողովի վրա դրված բոլոր խնդիրների ժամանակին և ողջ ծավալով կատարման համար:

93. Տարահանման հանձնաժողովի նախագահը պարտավոր է՝

1) իմանալ Տարահանման հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև Մարզում գործող տարահանման հանձնաժողովների և տարահանման հավաքակայանների նախագահներին.

2) իմանալ բոլոր հնարավոր արտակարգ իրավիճակների դեպքում տարահանման միջոցառումների անցկացման ժամանակ Տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրները.

3) մասնակցել բնակչության տարահանման հետ կապված հիմնական փաստաթղթերի մշակմանն ու ճշտգրտմանը.

4) իմանալ տարահանման ենթակա բնակչության թվաքանակը, տարահանման միջոցառումների անցկացման ժամկետները, տարահանման փոխադրումներին ներգրավված ավտոմեքենաների և այլ տրանսպորտային միջոցների քանակը.

5) Տարահանման հանձնաժողովի անձնակազմի հետ պարբերաբար անցկացնել մեթոդական պարապմունքներ տարահանման պլանների և տարահանման միջոցառումների պլանավորման ու անցկացման ուղղությամբ:

93. Սպառնալիքի դեպքում Տարահանման հանձնաժողովի նախագահը պարտավոր է՝

1) ազդարարում ստանալուց հետո սահմանված ժամկետում ներկայանալ աշխատատեղ (հավաքի հաստատված վայր).

2) կազմակերպել Տարահանման հանձնաժողովի անձնակազմի ազդարարումը և հավաքը սահմանված ժամկետներում.

3) ճշգրտել Տարահանման հանձնաժողովի անձնակազմի աշխատանքային գրաֆիկը և տալ հանձնարարականներ ստորադաս տարահանման և ընդունման հանձնաժողովներին՝ բոլոր տարահանման մարմինները (ուղարկման, ընդունման) համապատասխան պատրաստականության աշխատակարգի բերելու ուղղությամբ.

4) կապ հաստատել Մարզում գործող տարահանման մարմինների և տրանսպորտային կազմակերպությունների հետ.

5) ճշգրտել տարահանման մարզային պլանը և տրանսպորտային միջոցների բաշխման հաշվարկները.

6) կազմակերպել տարահանման երթուղիների, ժամանակավոր տեղակայման կետերի, երկարատև բնակության վայրերի և նստեցման կետերի նախապատրաստումը, ճանապարհային նշանների ու ցուցանակների տեղադրումը.

7) կազմակերպել կապի և ազդարարման համակարգերի պատրաստականության ստուգումը.

8) բոլոր տարահանման մարմիններում սահմանել ղեկավար կազմի շուրջօրյա հերթապահություն.

9) ընդունել պատրաստականության մասին ենթակա տարահանման մարմինների զեկույցները և զեկուցել մարզի քաղաքացիական պաշտպանության պետին:

94. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում Տարահանման հանձնաժողովի նախագահը պարտավոր է՝

1) ներկայանալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և ճշգրտել Տարահանման հանձնաժողովի խնդիրները.

2) կազմակերպել Տարահանման հանձնաժողովի անդամների հավաքը, ճշգրտել նրանց խնդիրները, տալ ցուցումներ տարահանման մարմիններին և տրանսպորտային կազմակերպություններին (պլանի կամ աղետի գոտում ստեղծված իրավիճակի գնահատականի համաձայն)՝ բնակչության տարահանման իրականացման ուղղությամբ.

3) պատրաստականության բերել բոլոր տարահանման մարմինները և կազմակերպել նրանց հետ անընդհատ կապ.

4) կազմակերպել տարահանման ենթակա բնակչության հավաքը, նախապատրաստումը և փոխադրումը անվտանգ տարածքներ.

5) վերահսկել նստեցման կետերին տրանսպորտային միջոցների ժամանակին հասցնելը.

6) կազմակերպել անապաստան մնացած բնակչության առաջնահերթ կենսաապահովումը.

7) կազմակերպել բնակչության տարահանման, պլանավորված անվտանգ տարածքներում բնակչության տեղաբաշխման ընթացքի մասին տվյալների հավաքը.

8) անհրաժեշտության դեպքում համագործակցել Մարզի քաղաքացիական պաշտպանության համապատասխան ծառայությունների հետ.

9) տարահանման միջոցառումների ընթացքի մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ԳԼՈՒԽ 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

95. Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը ենթարկվում է Տարահանման հանձնաժողովի նախագահին, իսկ նրա բացակայության ժամանակ կատարում նրա պարտականությունները լրիվ ծավալով:

96. Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը պարտավոր է՝

1) իմանալ Տարահանման հանձնաժողովի բոլոր անդամներին, ինչպես նաև մարզում գործող տարահանման հանձնաժողովների և տարահանման հավաքակետերի նախագահներին.

2) իմանալ տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում Տարահանման հանձնաժողովի անդամների ազդարարման կարգը և Տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրները.

3) մարզում գործող տարահանման հանձնաժողովների նախագահների հետ միասին մասնակցել բնակչության տարահանման պլանի մշակմանն ու ճշգրտմանը.

4) մասնակցել Տարահանման հանձնաժողովի փաստաթղթերի մշակմանը.

5) Տարահանման հանձնաժողովի նախագահի հետ միասին տարահանման մարմինների ղեկավարման, կապի ու ազդարարման համակարգերը նախապատրաստել և պահել մշտական պատրաստականության մեջ.

6) իմանալ տարահանման ենթակա բնակչության թվաքանակը, միջոցառումների անցկացման ժամկետները և տարահանման փոխադրումներին ներգրավված տրանսպորտի քանակը.

7)քաղաքացիական պաշտպանության ծառայությունների հետ փոխհամագործակցությամբ մշակել միջոցառումներ տարահանված բնակչությանը սննդամթերքով, ջրով, էլեկտրաէներգիայով և առաջին անհրաժեշտության իրերով ապահովելու համար:

97. Սպառնալիքի դեպքում Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը պարտավոր է՝

1) ապահովել Տարահանման հանձնաժողովի անձնակազմի ազդարարումը, վերահսկել նրանց հավաքը և զեկուցել Տարահանման հանձնաժողովի նախագահին.

2) կազմակերպել Տարահանման հանձնաժողովի նախագահի կարգադրությունների նախագծերի կազմումը և արձակված կարգադրությունների ու այլ հանձնարարականների հասցնումը կատարողներին, ինչպես նաև իրականացնել կատարման հսկողությունը.

3) վերահսկել մարզում գործող տարահանման մարմինների պարտականությունների կատարման ընթացքը.

4) Տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբերում կազմակերպել շուրջօրյա հերթապահություն.

5) Տարահանման հանձնաժողովի անձնակազմի համար ապահովել անհատական պաշտպանության միջոցների ստացումը.

6) մասնակցել կոնկրետ արտակարգ իրավիճակների դեպքում տարահանման պլանի ճշգրտմանը:

98. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը պարտավոր է՝

1) ապահովել Տարահանման հանձնաժողովի անդամների հավաքը և այդ մասին զեկուցել Տարահանման հանձնաժողովի նախագահին.

2) կազմակերպել Տարահանման հանձնաժողովի նախագահի որոշումների, կարգադրությունների ու այլ հանձնարարականների նախագծերի կազմումը, դրանց ընդունումից հետո տեղեկացումը կատարողներին, ինչպես նաև իրականացնում է այդ փաստաթղթերի պահանջների կատարման հսկողությունը.

3) ստուգել մարզում գործող տարահանման մարմինների, քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային տրանսպորտային ծառայության հետ կապի առկայությունը.

4) ճշգրտել տարահանման միջոցառումներին տարահանման մարմինների պատրաստականությունը և զեկուցել Տարահանման հանձնաժողովի նախագահին.

5) վերահսկել նստեցման կետերին տրանսպորտային միջոցների ժամանակին հասցնելը.

6) վերահսկել տարահանման ենթակա բնակչության հավաքի, փոխադրման նախապատրաստման, ինչպես նաև անվտանգ տարածքներ փոխադրման աշխատանքների ընթացքը.

7) ընդհանրացնել տարահանման ընթացքի, տարահանման ենթակա բնակչության ընդունման և տեղաբաշխման մասին մարզում գործող տարահանման հանձնաժողովներից ստացված տվյալները և զեկուցել Տարահանման հանձնաժողովի նախագահին.

8) իմանալ ստեղծված իրադրությունը և տեղեկացնել Տարահանման հանձնաժողովի անդամներին.

9) ժամկետային տեղեկացման քարտում նշված ժամկետներում տարահանման միջոցառումների ընթացքի և ավարտի մասին պատրաստել ամփոփագիր:

ԳԼՈՒԽ 15
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

99. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) իր գործունեությունն իրականացնում է հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ,

2) խաղաղ ժամանակ՝

ա. ՀՀ ՆԳՆ ՓԾ ՇՄՓՎ հետ համագործակցելով՝ մշակում է հանձնաժողովի տարեկան աշխատանքային պլանները և ներկայացնում հանձնաժողովի նախագահի հաստատմանը,

բ. իրականացնում է հանձնաժողովի անդամների հավաք,

գ. վարում է նիստերի արձանագրությունները,

դ. ճշտում է հանձնաժողովի անհատական կազմը՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնում առաջարկություններ հանձնաժողովի անդամների փոփոխման վերաբերյալ,

ե. ապահովում է նիստերում ընդունված որոշումների առաքումը կատարողներին և վերահսկում դրանց կատարման ընթացքը,

3) քաղաքացիական պաշտպանության համակարգը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման ժամանակ՝

ա. իրականացնում է հանձնաժողովի անդամների ազդարարումը և հետևում է հավաքի ընթացքին,

բ. կազմակերպում է հերթապահություն,

գ. մշակում է զեկույցների, հաշվետվությունների, հաղորդագրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

4) տարահանման վերաբերյալ կարգադրություն ստանալուց հետո՝

ա. նախապատրաստում է բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր և անհրաժեշտության դեպքում տրամադրում հանձնաժողովի անդամներին,

բ. կազմակերպում է տարահանման միջոցառումների ընթացքի վերաբերյալ զեկույցների և տեղեկատվության հավաքագրում և հաշվառում,

գ. ընդհանրացնում է ստացված տեղեկատվությունը, նախապատրաստում է հանձնաժողովի զեկույցները.

5) հանձնաժողովի անդամների՝ աշխատատեղեր (հավաքի հաստատված վայրեր) ժամանելու համար սահմանվում են ժամկետներ՝

ա) աշխատանքային ժամին՝ 30 րոպե,

բ) ոչ աշխատանքային ժամին՝ 1ժամ 30րոպե (ձմեռային ժամանակ՝ 2 ժամ):

ԳԼՈՒԽ 16
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴՈՒՐՍ ԲԵՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

100. Տարահանման հանձնաժողովի վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների դուրս բերման և հաշվառման աշխատանքային խմբի ղեկավարը ենթարկվում է Տարահանման հանձնաժողովի նախագահին: Նա հանդիսանում է աշխատանքային խմբի անձնակազմի անմիջական ղեկավարը:

101. Աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները.

2) ունենալ խմբի հաստիքա-պաշտոնեական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը.

3) իմանալ վտանգավոր տարածքից դուրս բերման ենթակա բնակչության, նյութական և մշակութային արժեքների թվաքանակը և հաշվառման կարգը.

4) ունենալ անհրաժեշտ տեղեկություններ՝ ժամանակավոր տեղակայման կետերի, երկարատև բնակության վայրերի քանակի և տեղաբաշխման վայրերի վերաբերյալ.

5) ունենալ տարբեր բնույթի արտակարգ իրավիճակների կանխատեսման դեպքում բնակչության տարահանման հաշվարկները.

6) ունենալ տարահանման միջոցառումների համար պլանավորված տրանսպորտի հաշվարկը.

7) անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ՝ նրանց ֆունկցիոնալ պատրաստականությունների կատարման բարելավման ուղղությամբ.

8) մասնակցություն ցուցաբերել տարահանման համապատասխան պլանների մշակմանը.

9) մասնակցություն ցուցաբերել վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների դուրս բերման և հաշվառման՝ համայնքներում ու կազմակերպություններում ստեղծված համապատասխան խմբերի անձնակազմերի հետ անցկացվող պրակտիկ ուսուցումներին ու վարժանքներին:

102. Սպառնալիքի դեպքում աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել Տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները.

4) կապ հաստատել վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների դուրս բերման՝ համայնքներում ու կազմակերպություններում ստեղծված համապատասխան խմբերի հետ.

5) իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ.

6) ճշգրտել համայնքների վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների դուրս բերման և հաշվառման համապատասխան խմբերի պատրաստականությունը տարահանման միջոցառումներին և զեկուցել Տարահանման հանձնաժողովի նախագահին.

7) մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը.

8) կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

103. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը և զեկուցել Տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) կազմակերպել համապատասխան հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման ընթացքի նկատմամբ և պատրաստել ամփոփիչ տեղեկատվություն՝ տարահանման միջոցառումների արդյունքների մասին.

4) Տարահանման հանձնաժողովի նախագահի համար Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի հետ միասին պատրաստել զեկույց՝ տարահանման միջոցառումների ընթացքի մասին:

ԳԼՈՒԽ 17
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՎՏԱՆԳ ԳՈՏՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

104. Տարահանման հանձնաժողովի անվտանգ գոտում բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման և հաշվառման աշխատանքային խմբի ղեկավարը ենթարկվում է Տարահանման հանձնաժողովի նախագահին: Նա հանդիսանում է աշխատանքային խմբի անձնակազմի անմիջական ղեկավարը:

105. Աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները.

2) ունենալ խմբի հաստիքա-պաշտոնեական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը.

3) իմանալ անվտանգ տարածքներում տեղաբաշխման ենթակա բնակչության, նյութական և մշակութային արժեքների թվաքանակը և հաշվառման կարգը.

4) ունենալ մարզի և համայնքների տարահանման մարմինների մասին անհրաժեշտ տեղեկություններ՝ ժամանակավոր տեղակայման կետերի, երկարատև բնակության վայրերի քանակի և տեղաբաշխման վայրերի վերաբերյալ.

5) անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց ֆունկցիոնալ պատրաստականության բարելավման ուղղությամբ.

6) մասնակցություն ցուցաբերել տարահանման համապատասխան պլանների մշակմանը.

7) մասնակցություն ցուցաբերել անվտանգ գոտում բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման և հաշվառման՝ համայնքներում ու կազմակերպություններում ստեղծված համապատասխան խմբերի անձնակազմների հետ անցկացվող պրակտիկ ուսուցումներին ու վարժանքներին:

106. Սպառնալիքի դեպքում աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել Տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները.

4) կապ հաստատել համայնքների վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների դուրս բերման և հաշվառման, ինչպես նաև անվտանգ գոտում բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման և հաշվառման՝ համայնքներում ու կազմակերպություններում ստեղծված համապատասխան խմբերի հետ.

5) իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ.

6) ճշգրտել վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների դուրս բերման և հաշվառման, ինչպես նաև անվտանգ գոտում բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման և հաշվառման խմբերի պատրաստականությունը տարահանման միջոցառումներին և զեկուցել Տարահանման հանձնաժողովի նախագահին.

7) մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը.

8) կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

107. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը և զեկուցել Տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) կազմակերպել տարահանված բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխումը ժամանակավոր տեղակայման կետերում.

4) ապահովել անվտանգ տարածքներում տեղաբաշխված բնակչության, նյութական և մշակութային արժեքների հաշվառումը.

5) կազմակերպել համապատասխան հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման ընթացքի նկատմամբ և պատրաստել ամփոփիչ տեղեկատվություն տարահանման միջոցառումների արդյունքների մասին՝ ըստ համայնքների.

6) Տարահանման հանձնաժողովի նախագահի համար Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի հետ միասին պատրաստել զեկույց՝ տարահանման միջոցառումների ընթացքի մասին:

ԳԼՈՒԽ 18
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

108. Տարահանման հանձնաժողովի տրանսպորտային ապահովման աշխատանքային խմբի ղեկավարը ենթարկվում է Տարահանման հանձնաժողովի նախագահին: Նա հանդիսանում է աշխատանքային խմբի անձնակազմի անմիջական ղեկավարը:

109. Աշխատանքային խմբի պետը պարտավոր է՝

1) իմանալ խմբի անձնակազմին և նրա խնդիրները.

2) ունենալ խմբի հաստիքա-պաշտոնեական կազմը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը.

3) իմանալ տարահանման միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների թվաքանակը.

4) իմանալ ավտոշարասյունների ստեղծման բազաները և նրանց ազդարարման, պատրաստականության բերման ու տարահանման միջոցառումներին ներգրավման կարգը.

5) ունենալ մարզի տարահանման մարմինների մասին անհրաժեշտ տեղեկություններ.

6) իմանալ տրանսպորտային ապահովման խմբերի տեղաբաշխման վայրերը և նրանց հետ կապի պահպանման կարգը.

7) իմանալ տարահանման երթուղիների տեխնիկական բնութագիրը.

8) անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ՝ նրանց ֆունկցիոնալ պարտականությունների կատարման բարելավման ուղղությամբ.

9) ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության, անհրաժեշտության դեպքում նաև

քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային տրանսպորտային ծառայության հետ համատեղ ապահովել տարահանման միջոցառումների նախապատրաստումը.

10) մասնակցություն ցուցաբերել տարահանման համապատասխան պլանների մշակմանը:

110. Սպառնալիքի դեպքում աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել Տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) ճշգրտել խմբի անձնակազմի խնդիրները, ստանալ և նրանց բաժանել անհատական պաշտպանության միջոցները.

3) կապ հաստատել մարզի համայնքներում գործող տրանսպորտային տնտեսության կազմակերպական միավորների, անհրաժեշտության դեպքում նաև քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային տրանսպորտային ծառայության հետ.

4) իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկությունները.

5) վերահսկել տրանսպորտային միջոցների նախապատրաստումը տարահանման միջոցառումներին.

6) արտակարգ իրավիճակների ծագման դեպքում ճշգրտել տարահանման պլանը և երթուղիները՝ իրադրության հնարավոր տեսության համաձայն.

7) մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը.

8) կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

111. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը.

2) ճշգրտել տարածքում ստեղծված իրադրությունը և առկա տրանսպորտային միջոցների ու տարահանման երթուղիների վիճակը.

3) ճշգրտել տարահանման երթուղիները և տարահանման մարմինների առջև դրված խնդիրները՝ բնակչությանը, նյութական և մշակութային արժեքները վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ տարահանելու ուղղությամբ.

4) ապահովել տրանսպորտային միջոցների հասցնելու գործընթացը տարահանման հավաքակայաններին, տարահանման ընդունման և տրանսպորտի նստեցման կետերին.

5) կազմակերպել հսկողություն տրանսպորտային միջոցների աշխատանքի նկատմամբ.

6) ժամանակին տեղեկացնել Տարահանման հանձնաժողովի նախագահին տրանսպորտի աշխատանքի գրաֆիկի հնարավոր խախտման մասին և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ.

7) Տարահանման հանձնաժողովի նախագահի համար Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի հետ միասին պատրաստել զեկույց՝ տարահանման միջոցառումների ընթացքի մասին:

ԳԼՈՒԽ 19
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

112. Տարահանման հանձնաժողովի սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման աշխատանքային խմբի ղեկավարը ենթարկվում է Տարահանման հանձնաժողովի նախագահին: Նա հանդիսանում է աշխատանքային խմբի անձնակազմի անմիջական ղեկավարը:

113. Աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները.

2) ունենալ խմբի հաստիքա-պաշտոնեական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը.

3) իմանալ տարահանման ենթակա բնակչության և նյութական արժեքների թվաքանակը, նրանց տեղաբաշխման վայրերը և հաշվառման կարգը.

4) կոնկրետ արտակարգ իրավիճակների դեպքում, ըստ կանխատեսման, նախօրոք պլանավորել տարահանման ենթակա նյութական արժեքների և նրանց համար նախատեսված տրանսպորտային միջոցների հաշվարկները.

5) ունենալ օբյեկտների և նրանցում պահվող նյութական արժեքների պաշարների ցանկն ու թվաքանակը.

6) ունենալ համայնքների տարահանման մարմինների մասին անհրաժեշտ տեղեկություններ՝ ժամանակավոր տեղակայման կետերի, երկարատև բնակության վայրերի, քանակի և տեղաբաշխման վայրերի վերաբերյալ.

7) անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց պարտականությունների կատարման բարելավման ուղղությամբ.

8) մասնակցություն ցուցաբերել տարահանման համապատասխան պլանների մշակմանը.

9) մասնակցություն ցուցաբերել սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման՝ համայնքներում և կազմակերպություններում ստեղծված համապատասխան խմբերի անձնակազմների հետ անցկացվող պրակտիկ ուսուցումներին ու վարժանքներին:

114. Սպառնալիքի դեպքում աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել Տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները.

4) կապ հաստատել համայնքների սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման համար ստեղծված համապատասխան խմբերի հետ.

5) իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ.

6) ճշգրտել սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման՝ համայնքներում և կազմակերպություններում ստեղծված խմբերի պատրաստականությունը տարահանման միջոցառումներին և զեկուցել Տարահանման հանձնաժողովի նախագահին.

7) մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը.

8) ճշգրտել հնարավոր խոցման օջախից նյութական արժեքների դուրս բերման համար նախատեսված տրանսպորտային միջոցների թվաքանակը.

9) կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

115. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը և զեկուցել Տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) նյութական արժեքների պաշարների տարահանման անհրաժեշտության դեպքում ապահովել դուրս բերումը, հաշվառումը.

4) Տարահանման հանձնաժողովի նախագահի համար Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի հետ միասին պատրաստել զեկույց՝ տարահանման միջոցառումների ընթացքի մասին:

ԳԼՈՒԽ 20
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԳՈՏԻ ԴՈՒՐՍ ԲԵՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

116. Տարահանման հանձնաժողովի բժշկական հաստատությունների անձնակազմերի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման և հաշվառման աշխատանքային խմբի ղեկավարը ենթարկվում է Տարահանման հանձնաժողովի նախագահին: Նա հանդիսանում է աշխատանքային խմբի անձնակազմի անմիջական ղեկավարը:

117. Աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները.

2) ունենալ խմբի հաստիքա-պաշտոնեական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը.

3) իմանալ վտանգավոր տարածքից դուրս բերման ենթակա բժշկական հաստատությունների անձնակազմերի և հիվանդների թվաքանակն ու նրանց հաշվառման կարգը.

4) ունենալ մարզի և համայնքների տարահանման մարմինների և բժշկական հաստատությունների մասին անհրաժեշտ տեղեկություններ.

5) ունենալ բժշկական հաստատությունների անձնակազմերի և հիվանդների տարահանման համար պլանավորված տրանսպորտային միջոցների հաշվարկը.

6) անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց ֆունկցիոնալ պարտականության բարելավման ուղղությամբ.

7) մասնակցություն ցուցաբերել տարահանման համապատասխան պլանների մշակմանը.

8) մասնակցություն ցուցաբերել բժշկական հաստատությունների անձնակազմերի հետ անցկացվող ուսուցումներին ու վարժանքներին:

118. Սպառնալիքի դեպքում աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել Տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները.

4) կապ հաստատել բժշկական հաստատությունների անձնակազմերի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման՝ համայնքներում ստեղծված համապատասխան խմբերի հետ.

5) իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ.

6) ճշգրտել բժշկական հաստատությունների անձնակազմերի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման և հաշվառման՝ համայնքներում ստեղծված համապատասխան միավորների պատրաստականությունը և զեկուցել Տարահանման հանձնաժողովի նախագահին.

7) մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը.

8) կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

119. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում աշխատանքային խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) կազմակերպել անձնակազմի հավաքը և զեկուցել Տարահանման հանձնաժողովի քարտուղարին.

2) Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին.

3) կազմակերպել տարահանված բժշկական հաստատությունների անձնակազմերի և հիվանդների տեղաբաշխումն անվտանգ գոտում գտնվող բժշկական հաստատություններում և այլ՝ նախօրոք պլանավորված շինություններում.

4) կազմակերպել հսկողություն տարահանման համապատասխան միջոցառումների անցկացման ընթացքի նկատմամբ և պատրաստել ամփոփիչ տեղեկատվություն տարահանման միջոցառումների արդյունքների մասին.

5) Տարահանման հանձնաժողովի նախագահի համար Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի հետ միասին պատրաստել զեկույց՝ տարահանման միջոցառումների ընթացքի մասին:

ԳԼՈՒԽ 21
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

120. ՀՀ Շիրակի մարզում ստեղծված տարահանման հավաքակայանների անձնակազմերը՝

1) կազմակերպում են բնակչության հավաքը, հաշվառումը և ուղարկումը տեղաբաշխման կետեր՝ տրանսպորտով և հետիոտն կարգով.

2) համապատասխան տարահանման հանձնաժողովին են տեղեկացնում բնակչության քանակի և ժամանման (մեկնման) ժամկետների մասին.

3) կազմակերպում են հավաքակայանում գտնվող բնակչության առաջին բժշկական օգնության ցուցաբերումը.

4) ապահովում են հավաքակայանում հասարակական կարգի պահպանումը, անհրաժեշտության դեպքում բնակչության պատսպարումը:

ԳԼՈՒԽ 22
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

121. ՀՀ Շիրակի մարզում ստեղծված ընդունման հավաքակայանների անձնակազմերը՝

1) դիմավորում են ժամանող տրանսպորտային և հետիոտն շարասյունները և իջեցման կետի անձնակազմի հետ համատեղ ապահովում են բնակչության ընդունումը, հաշվառումը և տեղաբաշխումը.

2) մասնակցում են տարահանված բնակչության տեղավորման աշխատանքներին.

3) բնակչությանն ուղարկում են տեղակայման (մշտական, երկարատև, ժամանակավոր) վայրեր.

4) համապատասխան տարահանման հանձնաժողովին են տեղեկացնում բնակչության քանակի և ժամանման (մեկնման) ժամկետների մասին.

5) կազմակերպում են բնակչության բժշկական օգնության ցուցաբերումը.

6) ապահովում են հավաքակայանում հասարակական կարգի պահպանումը և անհրաժեշտության դեպքում բնակչության պատսպարումը:

ԳԼՈՒԽ 23
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԵՏԻՈՏՆ ՇԱՐԱՍՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

122. Տարահանման հետիոտն շարասյան պետը նշանակվում է համայնքի (կազմակերպության) ղեկավարի (քաղաքացիական պաշտպանության պետի) որոշումով (հրամանով) և ենթարկվում է համայնքի (կազմակերպության) տարահանման հանձնաժողովի նախագահին:

123. Տարահանման հետիոտն շարասյան պետի հիմնական խնդիրն է՝ կազմակերպել կարգուկանոնն ու կազմակերպվածությունը շարասյունում, շարասյան երթն ըստ տրված երթուղու և ելակետով ժամանակին անցումը:

124. Տարահանման հետիոտն շարասյան պետը պարտավոր է մինչ տարահանման անցկացման վերաբերյալ հրահանգ ստանալն իմանալ տարահանվող բնակչության կազմը և թվաքանակը, շարասյունը բաժանել խմբերի՝ ըստ ցուցակի, նշանակել խմբերի ավագներ, նախօրոք ուսումնասիրել (ճշգրտել) երթուղին:

125. Տարահանման անցկացման վերաբերյալ կարգադրությունն ստանալուց հետո հետիոտն տարահանման շարասյան պետը՝

1) սահմանված ժամկետում ներկայանում է տարահանման հավաքակայան և նրա անձնակազմի հետ համատեղ կազմավորում է շարասյունը.

2) համայնքի (կազմակերպության) տարահանման հանձնաժողովի նախագահից ստանում է տարահանվողների ցուցակը և քաղվածք երթի սխեմայից.

3) նշված ժամկետում շարասյունը դուրս է բերում ելման կետ, զեկուցում և համապատասխան թույլտվությամբ սկսում շարժվել ըստ երթուղու:

126. Երթի ժամանակ տարահանման հետիոտն շարասյան պետը՝

1) շարասյունը տանում է նշված երթուղով, ապահովելով կարգավորման կետերի անցումը սահմանված ժամկետներում.

2) երթի ընթացքում և դադարի վայրերում կազմակերպում է կարգապահությունը և կարգուկանոնը շարասյունում, ձեռնարկում է միջոցներ՝ հետ մնացածներին շարասյանը միավորելու և հիվանդներին օգնություն ցույց տալու համար.

3) «Օդային տագնապ» կամ «Ուշադրություն բոլորին» ազդանշան ստանալու դեպքում անհապաղ այն հասցնում է տարահանվողներին և ձեռնարկում է միջոցներ մարդկանց պատսպարելու ուղղությամբ.

4) ճառագայթային աղտոտման սպառնալիքի դեպքում մարդկանց թաքցնում է տեղում կամ վերադասի ցուցումով դուրս է բերում նրանց անվտանգ շրջաններ:

127. Հավաքակայան ժամանելուն պես, տարահանման հետիոտն շարասյան պետը հաղորդում է տարահանման տեղական հանձնաժողովին՝ շարասյան կազմի ու թվաքանակի մասին և մասնակցում է մարդկանց տեղավորման աշխատանքին:

ԳԼՈՒԽ 24
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԱՎՏՈՇԱՐԱՍՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

128. Տարահանման ավտոշարասյան պետը նշանակվում է համայնքի (կազմակերպության) ղեկավարի (քաղաքացիական պաշտպանության պետի) որոշումով (հրամանով) և ենթարկվում է համայնքի (կազմակերպության) տարահանման հանձնաժողովի նախագահին:

129. Տարահանման ավտոշարասյան պետը պատասխանատու է տեղափոխվող բնակչության շրջանում կարգուկանոնի պահպանման համար:

130. Տարահանման ավտոշարասյան պետը պարտավոր է՝

1) մինչև բնակչության տարահանման անցկացման վերաբերյալ որոշում ստանալը՝

ա. ստուգել և ճշգրտել տեղափոխվող բնակչության կազմը և քանակը, հատկացված մեքենաների քանակը, հավաքակայանի տեղը, մարդկանց ավտոտրանսպորտ նստեցնելու տեղը, տեղավորման երթուղին, իջեցման տեղը, ավտոմեքենաներով տեղափոխման կանոնները, անվտանգ գոտում նրանց տեղավորման վայրը.

բ. յուրաքանչյուր մեքենայում նշանակել ավագներ և հրահանգավորել նրանց.

2) տարահանման մասին որոշում ընդունվելուց հետո համայնքի (կազմակերպության) տարահանման հանձնաժողովից ստանալ՝

ա. ավտոշարասյունով տեղափոխվող բնակչության ցուցակը.

բ. ժամանակին ներկայանալ հավաքակայան և հավաքակայանի անձնակազմի հետ միասին ստուգել մարդկանց քանակը, նրանց տեղաբաշխումը՝ ըստ ավտոմեքենաների և կազմակերպել նստեցումը ավտոմեքենաներ.

3) երթուղու ամբողջ երկայնքով կազմակերպել տեղափոխման կարգուկանոնը.

4) նշանակված վայր հասցնելուց հետո ապահովել մարդկանց կազմակերպված իջեցումը:

134. Տարահանման ավտոշարասյան պետը տարահանման տեղական հանձնաժողովին (ընդունման հավաքակայանին) զեկուցում է տարահանվածներին տեղ հասցնելու մասին և հանձնում է շարասյան փաստաթղթերը:»:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝